



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Zyngre

93 pphs

Enclosure




84

2-66

1312

ՎԻԿՏՐ ԶԻՒԳՕ

93 ԹԻՎԸ



539

ՀՐԱՆԱԴՅՈՒՄ

ՍՈՒՐՅ ԼՆՈՒՂ

ՍՈՒՐՅ ԼՆՈՒՂ



H a p m.
2-1217a

20 APR 2006

19 NOV 2010

84
ξ-66

ՎԻԿՏՕՐ ՀԻԻԳՕ

70867

93 ԹԻՎԸ

Ռուս. Թարգմ.
Մ. Մ.

Խմբագրութիւն
Գ. ՀԱՅԿՈՒՆՈՒ

5047

Hay

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ՄՈՒՔ ԵՒ ՄԱՆԳԱԴ

Մ Օ Ս Կ Վ Ա

12.06.2013

6483

Типография Моск. Армян. Литер.-Худож. Круга
Армянский пер., д. 2. Телефон 2-78-28

Главлит № 5755 Москва

Тираж 500

93 ԹԻՎԸ



1142-98

Համառոտագրած թարգմանութեան
իրատմքը եւ նկարների կլիշէները
վերցած են Главполитпросвет-ի
«Красная Новь» իրատարակչութիւնից:

Ա. Ռ. Ա. Ջ. Բ. Ա. Ն.

(Ռուսերէն իրատարակութեան)

Փրանսացի նշանաւոր գրող Վիկտոր Հիւգօն
ու միայն գրող էր, այլ և ակտիվ մասնակցու-
թիւն էր ցոյց տալիս Փրանսիայի քաղաքական
կեանքում՝ յայտարարելով իրեն յեղափոխու-
թեան ջերմ կողմնակից: Հիւգօն Փարիզումն էր
1871 թւին, Փարիզեան կոմմունայի ժամանակ:
Երբ կոմմունան յաղթահարւեց, 1874 թ. հան-
դէս եկաւ Վիկտոր Հիւգօի վէպը՝ «Խննտուներեք
թիվը», ուր վաղուց անցած դէպքերի նկարա-
գրութեան մէջ հեղինակը պարզ կերպով դրսևո-
րում է իր ունեցած համակրանքը դէպի «կա-
պոյտները», դէպի յեղափոխականները:

«93 թիւը» Հիւգօն գրել է, երբ եօթանա-
սնամեա ծերունի էր: Այս նրա վերջին վէպն
եղաւ: Հիւգօն մեռաւ 1885 թւին, ութսուներեք
տարեկան հասակում:

Հիւգօի «Խննտուներեք թիվը» վէպը պատ-
մում է Փրանսական մեծ յեղափոխութեան
մասին: Սակայն գուր կլինէր այս վէպի մէջ
փաստերի ճիշտ արտայայտութիւնը փնտոել:

Վիկտոր Հիւզօն ոչ թէ պատմաբան է, այլ արւեստագէտ: Նրա համար գլխաւորը ոչ թէ յեղափոխութեան փաստերն են, այլ նրա գաղափարը: Լանտենաքը, Սիմուրդէնը, Հօվէնը— սրանք մտացածին հերոսներ են: Սակայն Վանդէայի (գաւառ Ֆրանսիայի արեւմտեան ծովափին) ապստամբութիւնը մտացածին բան չէ: Դա պատմական փաստ է:

Այս պատմական փաստից Վիկտոր Հիւզօն օգտուել է նրա համար, որպէսզի նրանով ցոյց տա երկու գաղափարների պայքարը, այն է՝ յեղափոխականի և միապետականի: Յեղափոխական գաղափարի մարմնացումն է Սիմուրդէնը, իսկ միապետականինը՝ Լանտենաքը: Սիմուրդէնի պայքարը Լանտենաքի դէմ— դա յեղափոխութեան պայքարն է միապետութեան դէմ:

Սիմուրդէն, Հօվէն, Լանտենաք—սրանք ոչ թէ մարդիկ են, այլ հերոսներ: Վիկտոր Հիւզօն երկերում ոչ թէ մարդիկ են, այլ միշտ հերոսներ, որովհետեւ նա ռոմանտիկ գրող է: Իսկ ռոմանտիկ գրողը միտումով յաղթահարում է իրականութիւնը՝ պատկերացնելով ոչ թէ կեանքի մակերևոյթը, այլ նրա հիմունքները:

Հիւզօն, իր սեփական խօսքերի համաձայն, իր վէպով ուզում էր փառաբանել «Ֆրանսական հոյակապ յեղափոխութեան մեծութիւնն ու մարդկայնութիւնը»:

1793 թիվը Ֆրանսական մեծ յեղափոխու-

թեան գագաթն է: Կօնվէնտի՝ յեղափոխական Սորբրդի իշխանութեան երկրորդ տարին է այդ: Այդ թւին է պատժել Ֆրանսիայի գահընկեց թագաւորը՝ Լիւդովիկոս XVI-ը: Լիւդովիկոսի որդին՝ նրա ժառանգը՝ բանտ էր դրւած: Կուսակցութիւնների պայքարը Կօնվէնտում մեծ լարւածութեան հասաւ: Չախ կուսակցութիւնները գլուխ ունենալով Ռօբեսպիէրին, Դանտօնին և Մարատին՝ յաղթում էին: Այդ թւի հոկտեմբերին աջ կուսակցութեան ղեկավարները (ժիրոնդիստները, որոնք այսպէս էին կոչւում Ֆրանսիայի ժիրոնդա քաղաքի անունով) պատրժւեցին:

Միևնոյն ժամանակ յեղափոխութիւնը կըրւում էր ամբողջ Եւրոպայի և Ֆրանսիայի ներսում ծագած ապստամբութեան դէմ: Ապստամբները, ինչպէս այդ ցոյց է տրւած Հիւզօնի վէպի մէջ, գործում էին ֆրանսական յեղափոխութեան թշնամի պետութիւնների համաձայնութեամբ:

Հիւզօնի վէպի մէջ միայն մի վայրկեան ցոյց են տրւած յեղափոխութեան ղեկավարները՝ Ռօբեսպիէրը, Դանտօնն ու Մարատը: Նրանք ցոյց են տրւում վէճի ժամանակ, և այս վէճի մէջ արդէն զգացւում է նրանց ապագա կործանումը: 1794 թւին Ռօբեսպիէրը գլխօտինի վրա գլխատման ուղարկեց Դանտօնին, իսկ միևնոյն թւի յուլիսի 27-ին պատժեց և ինքը: Սակայն Ռօբեսպիէրը, Դանտօնը, Մարատը Հիւզօնի հա-

մար յեղափոխութեան մարմնացումները չեն նրանց մէջ չէ յեղափոխութեան «մեծութիւնն ու մարդկայնութիւնը»: Այդ «մեծութիւնն ու մարդկայնութիւնը» մարմնացած են Սիմոն-դէնի և Հովէնի անձնաւորութիւնների մէջ: Նրանց մէջ ջինջ զրւած է յեղափոխութեան գաղափարը:

I

«ԿԼԷՅՄՕՐ» ՆԱԻԸ

Պատգամաւոր Պրիէրը, որն ուղարկւած էր Ֆրանսիայի ափին, Բրետանում, Շերբուրգի մօտ կանգնած բանակը, գաղանի ազենտից ստացաւ այսպիսի մի նամակ.

«Քաղաքացի պատգամաւոր... յունիսի 1-ին, մակընթացութեան ժամին ծով կեխի «Կլէյմօր» ռազմական նաւը քօղարկւած մարտկոցով: Նա պէտք է Ֆրանսիայի ափը հանի այսպիսի նշաններ ունեցող մի մարդու. ծերունի, բարձրահասակ, սպիտակ մազերով, արիստօկրատ ձեռքեր, զիւղացիական հագուստ: Յետագա մանրամասնութիւնները կուղարկեմ վաղը: Նա ափ կեխի 2-ի առաւօտը: Նախազգուշացրէք մեր հարիւրակին, բռնէք նաւը: Հրամայէք զլիստեղ այդ մարդուն:

Եւ, իսկապէս, 1793 թւի յունիսի 1-ին, մակընթացութեան ժամին Բոննիւի ծովախորշից, որ գտնուում է Զերսէյ կղզու վրա, ծով մտաւ մի նաւ: Նա ապրանքատար նաւի տեսք ունէր,

բայց նրա միջին տախտակամածի վրա, ապրանքի փոխարէն, երեք կարգ շղթաներով ամրացրած էին տաններեք հաս խոշոր տեսակի թընդանօթ: Նաւը տնգլիական նաւատորմիղի կազմի մէջ էր մտնում, սակայն նաւի բոլոր ծառայողներն էլ կազմում էին բացառապէս ֆրանսացիները՝ գաղթական-սպաները և գասալիք-նաւաստիները:

«Կլէյմօր» նաւը նաւատորմիղի հրամանատարի կարգադրութեամբ առանձնացւեց՝ յատկապէս կարևոր և անյետաձգելի մի յանձնարարութիւն կատարելու համար: Մեկնումից առաջ նաւը ներս առաւ այն ուղևորին, որի մասին գաղանի ազնւոր գրում էր, որպէս յեղափոխութեան թշնամու մասին: Այս ուղևորին նաւ ուղեկցեցին անձնապէս նաւատորմիղի հրամանատարը և Ջերսէյ կղզու գաւառապետը:

Լօցմանը համոզւած վարում էր նաւը՝ ուրախացած մութով և մառախուղով: Մութը, մառախուղը և ուղեկցող քամին—այս ամենը նաւին օգնում էին: Լուսաբացին նաւը կանգ էր առնելու Ֆրանսիայի ափերին և ափ էր հանելու նրան, ով վերականգնելու էր թագաւորի իշխանութիւնը:

Լօցմանը, ինչպէս և ամբողջ խումբը, շարունակ նւիրւած էր նաւին, այլ խօսքով թագաւորին:

Ուղևորը, որի անունը ամբողջ խմբի մէջ

նաւապետն ու իր օգնականը միայն գիտէին, քայլում էր տախտակամածի վրա՝ նաւավարի համոզւած ու հաստատ քայլաձքով, ասես թէ չէր նկատում ճօճումը: Քամին պոկում էր նրա գլխից լայնեզր գլխարկը, գզգզում էր կոպիտ գործւածքից կարած պատմութեանը, մերթ փաթաթելով ձերունու բարձրահասակ մարմնը պատմութեանով, մերթ բացելով այն: Եւ պատմութեանի տակից փայլում էր բրետոնական գիւղացու հագուստը՝ լայն վարտիկը, երկարավիզ կօշիկները, այծի մորթուց կարած կարճ մուշտակը:

«Կլէյմօր»-ի խումբը ուղևորին «գեղջուկ» անունով կնքեց: Բայց նրա մասին ոչ մի բան չիմանալով՝ նաւաստիները շատ լաւ էին հասկանում, որ այս «գեղջուկը» նոյնպիսի մի գեղջուկ է, ինչպէս որ իրենց ռազմական նաւը առևտրական ապրանքատար նաւ է:

Քամին փչեց աւելի ցուրտ ու ալիքներ բարձրացան: Գիշերը սովորականից աւելի մութ էր: Ամպերը կուտակւելով երկնքի վրա՝ ծածկեցին լուսինը: Թանձր մառախուղն ընկաւ ծովի վրա: Ուժեղ ալեկոծումը դեռևս փոթորկի չէր փոխւում:

Բարձրահասակ ուղևորը, լսելով ծովի անեղ աղմուկը, իր մուշտակի գրպանից հանեց մի կտոր շօկօլագ, մի փոքրիկ կտոր կոտրեց ու

դրեց բերանը, չնայած սպիտակ մագերին՝ ծե-
րունու բոլոր ատամները առողջ էին:

Նա ուտում էր շօկօլադը և լսում էր ոչ թէ
ծովի, այլ Ֆրանսիայի աղմուկը, յեղափոխու-
թեան աղմուկը, որն այս տարի իշխանութիւնը
ուել էր ծայրահեղ կուսակցութիւնների ղեկա-
վարներին՝ Ռօբեսպիէրին ու Դանտօնին, և մե-
ծարում էր Մարատին: Այս տարի յեղափոխու-
թիւնը սպառնում էր յաղթել:

Ձրի աղմուկի և քամու սուլոցի միջից ծե-
րունին լսեց սարսափելի մի աղաղակ. նա տե-
սաւ, թէ ինչպէս նաւապետն ու նրա օգնականը
վազեցին գէպի միջին տախտակամածը տանող
սանդուխքը, և ինչպէս նրանք ետ դարձան՝
շմամ այս ու այն կողմ նայելով: Թնդանօթա-
ձիգների ամբողջ կազմը վախեցած վեր բարձրա-
ցաւ, շտապելով և մէկը միւսին հրելով: Պատա-
հել էր ինչ որ աւելի վատ բան, քան փոթորիկը:

Ծերունին, շարունակելով շօկօլադը ծամել,
գնաց գէպի սանդուխքը, մի կողմ մղեց նաւա-
պետին և տեսաւ՝ մարտկոցի թնդանօթներից
մէկը, քսանչորս-ֆնտանոց մի հրանօթ, պոկւել
էր շղթաներից: Թնդանօթը կշռում էր տասը
հազար ֆունտ և թռչում էր մանկական գնդակի
պէս: Նա մերթ պտտւում էր իր տեղում, մերթ
թեքւելով ուղիղ անկիւնով՝ մղւում էր այնտեղ,
որ կողմի վրա թեքւում էր նաւը, ծեծում էր
նաւի պատերը՝ սպառնալով կտրատել այն: Նա

կատաղում էր, ետ էր նահանջում, հարւածում
էր՝ ինչ որ պատահում էր, կտրատում էր այն
ամենը, ինչ կանգնում էր նրա ճանապարհին:

Նա ճգմեց արդէն հինգ թնդանօթաձիգ զին-
ւորի և հարևան թնդանօթը վայր գլորեց պատ-
ւանդանի վրայից:

Այս պատահարի մէջ մեղաւորը կանօնիրն
էր, որը վատ էր պտտեցրել շղթայի պտուտակը
և արգելակներ չէր դրել թնդանօթի անիվների
տակ, որի հետևանքով բարձր այս ու այն կողմ
էր ընկնում շրջանակի մէջ՝ տեղահան անելով
երկու պատւանդանն էլ, մինչև որ, վերջապէս,
թնդանօթի ճախարակը դուրս պրծաւ: Բացի այդ
կտրւեց պարանը, այնպէս որ թնդանօթն այլևս
անհաստատ էր կանգնած պատւանդանի վրա:
Մի մեծ ալիք խփեց նաւի թնդանօթային կողին,
վատ ամրացրած թնդանօթը շուռ եկաւ, կարեց
շղթան և սկսեց զբօսնել գեկերի միջև:

Բարձրահասակ ուղևորն իջաւ տախտակա-
մածը, որի վրա ծանր կերպով այս ու այն կողմն
էր խփւում հսկայական թնդանօթը: Նա աղցան
էր արել սպանւածների մարմինները և կտր-
կտոր արել ներքնակները, մանձակախները,
պահեստի առագաստները, պարանների կծիկնե-
րը, պարկերը նաւաստիների սպիտակեղէնը, այն
ամենը, ինչ վերից գցում էին նաւաստիները՝
ենթադրելով թէ այդ փալասները կարող են կան-
գնեցնել ապստամբւած առարկային:

Ծերունի ուղևորը դիտում էր աւերումի այս տեսարանը, հետևում էր իր շուրջը պտտող թնդանօթի կատաղի շարժումներին ու չէր շարժւում:

Այս կատաստրոֆայի մեղաւորը՝ կանօնիրը նոյնպէս ցած իջաւ՝ երկաթէ մի ձող ձեռքին: Ուրիշը չուէր՝ նա արձանացաւ անկիւնում՝ մէջքով յենւած նաւի պատին, և սպասում էր այն ըոպէին, երբ թնդանօթը սլանա իր կողքից: Բայց թնդանօթը այս ու այն կողմն էր խփւում հեռաւոր անկիւնում:

— Այստեղ... Այստեղ... գրաւիչ կանչում էր նրան կանօնիրը, ինչպէս տէրն է գրաւում մրթմրթացող շանը, որպէսզի մտրակի ու հանգստացնի նրան:

Թնդանօթը մի ակնթարթ կանգ առաւ ու յանկարծ նետւեց կանօնիրի վրա: Սա ետ թռաւ: Կիտախաւարի մէջ սկսեց թնդանօթի կռիվը մարդու հետ: Այս մենամարտին վերից նայում էր նաւի խումբը:

Ծերունի ուղևորը աշալուրջ կերպով հետևում էր կռիւ բոլոր փոփոխութիւններին՝ ենթարկելով միեւնոյն վտանգին, ինչ որ կանօնիրը: Ահաւասիկ թնդանօթը նետւեց կանօնիրի վրա: Նա ետ թռաւ: Թնդանօթը նորից նետւեց նրա վրա: Նա նորից ետ թռաւ: Թնդանօթը ասես թէ կենդանի էակ, ասես թէ տեսնող, յետադարձ շարժումով սլացաւ մարդու վրա ջախջախող կացնի

արագութեամբ: Աղմուտ նաւի կողի ու սանդուխքի միջև եղած անկեանը՝ կանօնիրը պէտք է ոչնչանար:

Այդ միջոցին ծերունի ուղևորը մի անսովոր ճարպկութեամբ յարձակեց թնդանօթի վրա: Ճանապարհին ճանկելով մի հակ թղթաղբամ և, ճգմելու վտանգին ենթարկելով, հակը շարտեց ուղղակի լաֆէտի անիվների տակ: Թնդանօթը ասես թէ սայթաքեց: Այդ ժամանակ կանօնիրը իր երկաթէ ձողը արագ կոխեց լաֆետի ետևի ամենամօտ անիվի ճաղերի միջև: Թնդանօթը յաղթւած էր:

— Պարոն,— ասաց կանօնիրը,— գուք փըրկեցիք իմ կեանքը:

Բարձրահասակ ուղևորը ոչինչ չպատասխանեց:

Թնդանօթը յաղթւած էր, բայց նաև ուժեղ կերպով ֆրասուեց: Ստիպւած եղան մոռանալ այն վտանգը, որ իրենց կարող են նկատել: Ստիպւած եղան տախտակամածը լուսաւորել՝ լապտերները ամրացնելով նաւի եզրին, զանազան տեղերում:

Թնդանօթը յաղթւած էր, սակայն նաև թեքւել էր իր ուղղութիւնից ու աւելի հարաւ էր անցել, քան հարկաւոր էր:

Թնդանօթը յաղթւած էր, սակայն քամին քշում էր նաև սանձարձակ ծովի վրայով, մեծ ալիքները լիզում էին ֆրասուած նաւը, և ծովի

վրա աճում էր փոթորիկը:

Այնուամենայնիվ թնդանօթը յաղթեաձ էր, և յաղթանակը տարած մարդուն հարկաւոր էր վարձատրել:

Նաւապետը կանօնիւրին ծերունու մօտ տաւրաւ: Նրա հագուստը պատառոտեաձ էր, մաղերը զգզզեաձ, աչքերը վառուում էին:

— Զօրավար, — ասաց նաւապետը, — անաւան մարդը, որն ազատեց նաւը: Ի՞նչ քէ գտնում, որ սրան պէտք է վարձատրել:

— Այդ իրաւունքը ձեզ է պատկանում և ոչ թէ ինձ, — պատասխանեց ծերունին: — Ի՞նչ էք նաւապետը:

— Իսկ դուք զօրավարը:

Ծերունին նայեց կանօնիւրին:

— Այստեղ եկ:

Կանօնիւրը մօտեցաւ նրան:

Ծերունին նաւապետի կրծքից պոկեց Սուրբ Լիւդօվիկոսի շքանշանը ու կպցրեց կանօնիւրի մուշտակին:

— Ուրաւ, — գոռացին նաւաստիները:

Նա, որին նաւապետը զօրավար անւանեց, մատով ցոյց տալով ուրախութիւնից ապշած կանօնիւրի վրա, ասաց.

— Իսկ այժմ գնդակահարել նրան:

Նաւաստիների խանդավառ աղաղակը վայրկենապէս լռեց, և պարզ լսուում էր միայն երկինքն ու ծովը պատառոտող փոթորկի աղմուկը:

— Այս մարդու անփութութիւնը քիչ մնաց խորտակէր նաւը, — ասաց զօրավարը: — Փոթորիկը հետադարձում է նաւը: Փոթորիկը հետադարձում է մեզ: Իւրաքանչիւր վրիպում թշնամու վերաբերմամբ պատժուում է մահեամբ: Արիութիւնը պէտք է վարձատրել, իսկ անփութութիւնը պէտք է պատժել:

Եւ ծերունին աւելացրեց:

— Իրագործել դատաւճիւրը:

Կանօնիւրը, Սուրբ Լիւդօվիկոսի խաչը պատառոտած մուշտակից կախ, գլուխը խոնարհեց: Երկու նաւաստի ցած իջան ու վերադարձան մի սաւան ձեռներին: Սէրժանտը ծովային հետեակ զօրքի ղինւորներից տասներկուսին աւանձնացրեց ու կանգնեցրեց երկու շարք, իւրաքանչիւրում վեց հոգի: Դատապարտեաձ լուռ կանգնեց նրանց միջև: Քահանան, խաչելութիւնը ձեռքին, առաջ անցաւ ու մօտեցաւ նրան:

— Մա՛րջ, — հրամայեց սէրժանտը:

Ձոկը ուղղեց գէպի նաւի քիթը: Երկու նաւաստիները, սաւանը ձեռներին, գնում էին ետեից: Փայլեց լոյսը, հառաչեց հրացանի զարկը, և կանօնիւրն ընկաւ ծովը:

— Ուղեորը նոյնիսկ չնայեց այն կողմը, ուր գնդակահարեց կանօնիւրը:

— Այո, նա իսկական զօրավար է, — ասաց կապիտանի օգնականը:

— Նա լաւն է:



— Այսինքն անողոր է, — ուղղեց կապիտանը:
Օգնականը նայեց նրան:

— Դուք, կապիտան, իսկական խօսքը գտաք:
Անողոր... Այդ հէնց այն է, ինչ հարկաւոր է
մեզ: Մենք պէտք է չորսկտոր անենք այդ ան-
պիտան, արքայասպաններին: Նրանք կտրեցին
թագաւորի գլուխը, մենք էլ չպէտք է ներենք
նրանց... Ծեծել, մորթել, ոչնչացնել բոլոր մի-
ջոցներով:

Այնինչ փոթորիկը բոլոր միջոցներով ձե-
ծում, մորթում և ոչնչացնում էր ուժասպառ
նաւը, որի վրա տպաստան էին գտել թագաւո-
րի կողմնակիցները:

— Գամին բարձրացնում է պիքը, — ասաց
լօցմանը, — այլևս անգոր ղեկավարելու նաւը:

Ամպերը սև գանգաւածներով կախուել էին
ադմիրալ ծովի վրա, արևածագի գունատ շերտը
եւ քաշելով ամպերը՝ երկինքը բաժանում էր
ծովից: Արևմուտքում լուսինն իր վերջին ճառա-
գայթներն էր տարածում թանձր մութի միջով,
որպէսզի մթութեան միջից պոկի այն վիթխարի
ժայռերը, որոնք սպառնում էին խորտակել նաւը:

Ալեկըում, արևածագի շերտի ֆօնի վրա
գծագրում էին ութը նաւ՝ Փրանսական էս-
կադրան:

Արևմուտքում մահն էր ծովի յորձանքնե-
րում, արևելքում՝ մահը կռւի մէջ:

— Շախ և մատ երկու կողմից, — ասաց

կապիտանի օգնականը և ծիծաղեց:

— Դեռ կկուենք, — պատասխանեց կապի-
տանը:

Պորհրդակցելով լօցմանի հետ, նա ասաց
օգնականին.

— Ութ նաւ — երեքհարիւր ութսուն թնդա-
նօթ: Մեզ մօտ կռւի համար պէտքական ինքը
հատ թնդանօթ կա:


Եւ կռւի պատրաստուելու նշան տալով՝ նա
գնաց ձերուճի ուղևորի մօտ:

— Զօրավար, — ասաց նա, — մենք թակարդի
մէջ ենք էսկադրայի և խուժերի միջև: Աւելի
լաւ է ընկնել կռոււմ, քան ալիքների մէջ: Բայց
մեռնելը մեր պարտականութիւնն է և ոչ թէ
ձերը: Դուք շինէք՝ միապետութիւնն էլ կարող
է կործանուել: Ես ձեզ կաամ մի մակոյկ իր թիա-
վարով: Ալիքները մեծ են, ծովում մութն է,
դուք աննկատելի կերպով կտահէք: Լինում են
ղէպքեր, երբ փախուստը համագոր է յաղթու-
թեան:

Ծերունին, դաժան, գլխով համաձայնու-
թեան նշան արաւ:

Նաւապետը դիմեց շոկատին.

— Այս մարդը թագաւորի ներկայացուցիչն
է: Սա մեր պաշտպանութեանն է յանձնուած,
մենք պէտք է պահպանենք նրան: Նա անհրա-
ժեշտ է Փրանսական դահի շահերի համար: Նա
վանդէյական բանակների ղեկավարը կլինի: Սա



Եւ շուտով նաւից մեկնեց մի մակոյկ:

յայտնի սաղմահան գորավար է: Նա Թրանսիայի ափերին պէտք է մօտենար մեզ հետ միասին: Ինչ անենք, այժմ կմօտենա առանց մեզ: Գլուխը փրկել — նշանակում է ամեն ինչ փրկել: Ո՞վ է յանձն առնում գորավարին ափ հասցնել:

Մութ շարքերից առաջ անցաւ մի մարդ և ասաց.

— Ես:

Եւ շուտով նաւից մեկնեց մի մակոյկ: Կամաւոր նաւաստին ուժեղ կերպով թիավարում էր՝ խորտակող նաւից տանելով թագաւորական գորքերի ապագա ղեկավարին:

Նաւապետը խլացուցիչ գոռաց ձայնատար փողի մէջ.

— Նորին մեծութիւն թագաւորի ծովագնացներ: Սպիտակ դրօշակ բարձրացրէք միջահայժի վրա. մենք դիմաւորում ենք մեր վերջին արշարոյսը:

Նաւից սրտաց թնդանօթի ձայնը:

— Կեցցէ թագաւորը, — գոռաց ջոկատը:

Եւ հազիվ լսելի մի աղաղակ հասաւ հեռաւոր նաւերից.

— Կեցցէ հանրապետութիւնը:

Եւ երեք հարիւր թնդանօթների զարկերի գլորոցը ցնցեց ծովային խորութիւնը:

Երկինքը լուսավառեց հրդեհով: Քամին խաղում էր ծիրանագոյն ծխի քուլաների հետ: Նաւերը մերթ կորչում, մերթ յայտնւում էին,

որպէս երևոյթներ: Կռիվը կարճ տեւեց: «Կէտ-
մօր» նաւը կործանուեց:

Իսկ մակոյկում, անմարդաբնակ ծովային
տարածութեան մէջ, կռից հետո, թիւաւարը,
ձգելով թիւերը՝ շեշտակի նայեց ուղևորի աչքե-
րին և ասաց.

— Դուք մարկիզ դը Լանտէնաքն էք, Վի-
կօնա դը Ֆօնտէնէն: Դուք իմ սինիօրը, իմ տէրն
էք: Դուք փախաք մեր տեղերից և այժմ վերա-
դառնում էք: Ինչ որ դուք հրամայէք—ես բոլո-
րը կկատարեմ: Մենք պէտք է հպատակենք
Աստծուն և թագաւորին—թագաւորը չէ՞ որ
Աստուած է երկրի վրա, —իսկ նրանցից յետո
սինեօրին, որը մեզ համար նոյնն է, ինչ որ թա-
գաւորը: Ես իսկոյն ճանաչեցի ձեզ, հէնց որ նա-
մտաք, ես մանկութիւնից եմ յիշում ձեզ,—բայց
ես գաղտնի էի պահում ձեր անունը: Ինձ կան-
չում են Գալմալօ:

Եւ նա նորից վերցրեց թիւերը:

Լ Ա Ն Տ Է Ն Ա Ք Ը

Այդ ժամանակ ամբողջ ծովափը, ամբողջ
Բրէտանը բռնուած էր ապստամբութեամբ: Քիւ-
ղացիները պարտիզանական կռիվ էին մղում յի-
զափոխական դօրքերի դէմ:

Ապրիլի 28-ին Փարիզեան Կօմմունան ապ-
ստամբ Վանդէա ուղարկածներին հրաման ար-
ձակեց. «Ոչինչ չիննայել, ոչ ոքի չներել»:

Յունիսի 2-ին, այն օրը, երբ մարկիզ դը
Լանտէնաքը ձրանսիայի ավին ելաւ, Փարիզից
դուրս եկած տասներկու հազար զինուորներից
ութ հազարը կոտորուեցին:

Փարիզեան կամաւորների բառալեօնը սէր-
ժանա Ռազուրի զլիւաւորութեամբ, Սօզըէյեան
անտառում, հետախուզութեան ժամանակ, հան-
դիպեց մի կնոջ՝ երեք երեխաների հետ:

Սէրժանա Ռազուրը հարցրեց.

— Ո՞ւմ կողմն ես, կապույտների, թէ՞ սպի-
տակների:

Կինը պատասխանեց.

— Ես... երեխաներիս կողմն եմ:

— Ի՞նչ է անում քո ամուսինը, — շարունակեց սէրժանաւ իր հարցաքննութիւնը:

— Նա սպանւած է: Նա կուում էր թագաւորի համար, իր տիրոջ համար, իր քահանայի համար:

— Իսկ դո՞ւ ինչ ես անում:

— Գնում եմ երեխաներիս հետ:

— Ո՞ւր:

— Ուր աչքս է կարում:

— Ո՞րտեղ ես գիշերում:

— Գետնի վրա:

— Ինչո՞վ ես կերակրւում:

— Պտուղներ ենք ուտում — վայրի սալոր, մուշ, գօղնօշ, ձարխտտի ծիլեր:

Երկու երեխան՝ աղան ու աղջիկը նայում էին սէրժանտին: Կնոջ գրկում պտուկած էր ծծկեր երեխան: Կինը էգի անտարբերութեամբ ցուցադրել էր իր մերկ կուրծքը: Նրա ոտքերին ոչ կօշիկ կար և ոչ էլ գուլպա. ոտքերն արիւնտտ էին:

Սէրժանան ասաց.

— Իսկ դու գիտե՞ս, որ մենք փարիզցիներ ենք, որոնց դէմ կուել է քո ամուսինը:

— Տէր Յիսուս... — հատաչեց կինը՝ ձեռքերն ազօթքի բռնելով:

Սէրժանան ընդհատեց.

— Մտտախաղաղութիւններ պէտք չեն:

Ու կուացաւ դէպի կնոջ ստինքները ծծող մանուկը: Աղջիկը ծիծը թողեց, գլուխը կամացուկ թեքեց և նայեց սէրժանտի գլգլւած մագերով ծածկւած դէմքին:

Սէրժանան ուղղեց ու ասաց.

— Ընկերներ... Այս հանդիպումից հետևում է այն, որ մեր գումարտակը պէտք է այս երեք որբացած մանուկների հայրը գտնուի: Համաձայն էք:

— Կեցցէ հանրապետութիւնը... — գոտային գինւորները:

— Ուրշւած է, — ասաց սէրժանաւ:

Եւ «Կարմիր Գլխարկ» գումարտակի երեխաներն իրենց մօր հետ ճանապարհ ընկան:

Ձինւորները գգուշութեամբ առաջ էին անցնում:

Աւիւնների ծայրերից վեր կշկշում էին թըռչունները: Անտառը կազմւած էր ծփիներից, թղթենիներից և կաղնիներից: Նա աճել էր ուղիղ, հարթ աեղում: Մամուռն ու թանձր խոտը խլացնում էին մարդկանց քայլերի աղմուկը: Ոչ ճանապարհ կար և ոչ էլ արահետ: Սրտտերև վայրի սալորենին, ձարխտաւ, բարձր, ծակոց թփերի ամբողջ ցանկապատերը տասը քայլ հեռաւորութեան վրա թոյլ չէին աալիս որոշել մարդուն: Երբեմն թփերի մէջ երևում էին ճահիճների բնակիչները՝ արագիւլը կամ կոցահարը:

* * *

Մինչ «կարմիր Գլխարկ» գումարտակը դանդաղ, դարանից վախենալով, առաջ էր շարժուժանտառի միջով, Գալճալուն մարկիզը դը Լանտէնաքին ափ հանեց:

Մարկիզը դը Լանտէնաքն ասաց նաւաստուն.

— Մոռացիր, որ դու նաւաստի ես: Եղիր գիւղացի:

— Նախ քան նաւաստի դառնալը՝ գիւղացի էի,—պատասխանեց Գալճալուն:

— Մենք կ՛նուանանք տարբեր կողմեր,—ասաց մարկիզը:—Գու կերթաւ Սէնտ-Օբէն անտառը: Այնտեղ, ձորի ծայրին, Սէն-Տիէլի և Պլիզիլեակի միջև մի մեծ ծառ կտեսնես: Երեք անգամ իրար ետևից «ձերոնցից եմ» կանչիր Երբորդ կանչից գեանի տակից մի մարդ դուրս կգա:

— Ծառի արմատները տակը գանձող ստորերկրեա անցքից, գիտեմ:

Մարկիզը դէպի Գալճալուն մեկնեց իր կանաչ մեծաքսէ ժապաւէնը:

— Ահա իմ գզականիշը: Վերցրու այս: Կարևոր է, որ առայժմ ոչ ոք չիմանա իմ անունը: Բայց բաւական կլինի այս գզականիշը: Վրայի շուշանը նորին մեծափայլութիւն թագուհու ձեռքով կարւած է բանտում:

Գալճալուն ծունր իջնելով՝ շուրթերը հպեց սակէ շուշանին:

— Այս գզականիշը դու ցոյց կաաս ձորի մօտի մարդուն,—շարունակեց մարկիզը:—Նա կհասկանա: Այդ մարդը Պլանիշլօն է, կամ ինչպէս կոչում են նրան՝ «Փագաւորական Սիրտը»:

Գալճալուն ուշադրութեամբ լսում էր՝ միտը պահելով այն մարդկանց անունները, որոնց պէտք է տեսնէր, և այն տեղերի անունները, ուր մարկիզը ուղարկում էր նրան: Մի անգամ միայն ընդհատեց մարկիզին, երբ յիշեց մարկիզի հայրենի ամրոց Լա-Տուրգը:

— Այնտեղ ստորերկրեա անցք կա: Իմ հայրը գիտէր այն և ցոյց տւեց ինձ: Նա մնացել էր հին ժամանակներից, երբ Լա-Տուրգը յաճախ պաշարում էին: Եւ պաշարւածները միշտ էլ կարողանում էին փախչել այդ ճանապարհով, որովհետև նա անտառն է դուրս գալիս:

— Ես այդ ճանապարհը չգիտեմ,—ասաց մարկիզը:

— Կա,—առարկեց Գալճալուն,—կա, իմ սինեօր,—հաստատ գիտեմ: Պէտք է պատի միջի քարը շուռ տալ:

Մարկիզն ընդհատեց.

— Ժամանակ չկորցնենք: Նախ և առաջ գործ:

Եւ նա շարունակեց.

— Նորին մեծութեան շուշանը ամեն տեղ

քեզ լաւ ընդունելութիւն է տպահալում: Չմոռա-
նաս, որ դու այնպիսի տեղերով ես անցնելու,
ուր ամբողջ բնակչութիւնը միայն զիւրացիներէց
ու լեռնցիներէց է բաղկացած: Գու պէտք է
չորերդ փոխես: Հանրապետականներն այնքան
յիմար են, որ կապոյտ կամ գօլով և եռագոյն
զգականիչ ունեցող եռանկիւնի գլխարկով կա-
րելի է ամեն տեղ անցնել: Այժմ, չէ՞ որ, ոչ
գնդեր կան և ոչ էլ զինւորական համազգեստ:
Բոլորին, ում անունը քեզ տւել եմ, ասա, որ
հասել է ժամանակը՝ միաժամանակ երկու պա-
տերազմ տանելու, այն է՝ մեծ ու փոքր: Ան-
տառում պատերազմելը գերազատում եմ բաց
զաշտում պատերազմելուց: Այս ամսի վերջին
պէտք է ունենամ հինգհարիւր հազար բնաջնջող-
ներ՝ անտառներում թագնւած: Հանրապետական
բանակը իմ որան է: Մենք կուելու ենք աւա-
զակների պէս: «Ոչ ոքի չխնայել» և «ամեն տեղ
զարան մտնել» — ահա իմ գործելակերպը: Ան-
գլխացիները մեր կողմն են: Եւրօպան մեզ կօղնի:
Պէտք է վերջ տալ յեղափոխութեանը: Ասա նրանց
այս ամենը:

— Իսկ ո՞րտեղ կտեսնեմ ձեզ, իմ սինեօր:

— Մի շաբաթ էլ չի անցնի, երբ կսկսեն
իմ մասին խօսել: Ես իմ ներկայութիւնը գոր-
ծողութիւններով ցոյց կաամ: Ես վրէժ կառնեմ
թագաւորի և հաւատի համար: Գնա:

Եւ արձակելով Գալ՝մալօին՝ Մարկիզ դը Լան-

տէնաքը մենակ մնաց: Նա բարձրացաւ մի բարձր
աւազաթմբի վրա, որ այնտեղից դիտի շրջապատը:
Աւազաթմբի վրա բարձրանում էր մղմնացոյց
բարէ սիւնը: Յենւելով սիւնին՝ մարկիզն ուշա-
դրութեամբ դիտում էր մթնոլ հեռուն: Ահա,
վերջապէս, այն, ինչ նա փնտռում էր՝ ցանկա-
պատած տների ու ծառերի մի խումբ — ազա-
րակը:

Հարթութիւնը մթնեց, իսկ անտառում թա-
գաւորում էր իսկական գիշեր: Արեւելքում ել-
նում էր լուսինը: Աստղերն աստղում էին եր-
կինքը: Ծովից փչում էր քամին՝ երկրին տիրած
լուսթեան միակ խոնգարիչը:

Մարկիզ դը Լանտէնաքը չէր շարժւում: Նա
մենակ էր, ոչ ոք նրան չէր ձանաչում, ոչ ոք
նրան չէր կռակածում: Եւ, յանկարծ, հեռաւոր
զանգակատանը, հարթութեան ծայրում, նա տես-
աւ՝ զանգակների վանդակը մերթ փակւում,
մերթ բացւում էր. որոշ համաչափ ժամանակից
յետո նրա բարձր պատուհանը մերթ աչքի էր
զարնւում սպիտակ բծով, մերթ մթնում էր. նրա
միջով մերթ թափանցում էր երկինքը, մերթ
ստւեր էր ընկնում նրա վրա, և այս ստւերն ու
լոյսի ցրմունքները բոպէ առ բոպէ յաջորդում
էին իրար՝ դնդանի վրա տեղացող մուրճի հար-
ւածների ճշտութեամբ:

Բարձր աւազաթմբի վրայից կարելի էր
տաննեմէկ աւան և զիւր որոշել:

Մարկիզ դը Լանտէնաքը դիտեց բոլոր զանգակաւորները և համոզուեց, որ ամեն տեղ զանգակները վանդակները մերթ սեանում, մերթ ճերմակին են տալիս: Մարկիզ դը Լանտէնաքը գլխի ընկաւ, որ բոլոր զանգակատներում կոչնակ էին գարկում:

Քամին փչում էր ծովից ու տանում էր զօդանշը: Մարկիզ դը Լանտէնաքը շէր լսում զօդանշը: Նա տեսնում էր զօդանշը:

— Մի՞թէ. — ասաց մարկիզը: — Բայց ոչ ոք չգիտէ, որ ես այստեղ եմ:

Նա ականջ էր դնում իւրաքանչիւր շրշիւնը: Յանկարծ նա տանապատիկ զգոյշ եղաւ: Արդէն մի քանի բոպէ նրա գլխավերեւը ասես թէ տերեւներ էին շրշում: Նա ետ նայեց ու տեսաւ թղթի մի կտոր. քամին պոկոտում էր աֆիշը, որ կպցրած էր մղոնացոյց սիւնին:

Երկինքը պարզ էր: Ներքեք՝ աւազաթմբի տակ՝ մութ էր, բայց գազաթը գեռա լուսաւորւած էր: Աֆիշի վրա խոշոր տառերով գրուած էր.

«Փրանսական Հանրապետութիւն,

միաձոյլ և անբաժանելի:

Մենք, Մառնի պրիէր, շերբուրգեան ծովափնեա բանակի ժողովրդական լիազօրը, սրանով հրամայում ենք. — նախկին մարկիզ դը Լանտէնաքը, Ծօնտէնէ Վիկօնտը, որ իրեն բրէտոնական պրինց է անւանում, որը Գրանւիլի մօտ

գաղանի կերպով Ֆրանսիայի ամեն է դուրս եկել՝ յայտարարում է օրէնքից դուրս: Նրա գլուխը գնահատուած է: Նա, ով իշխանութեան ձեռքը կտա նրան կենդանի կամ մեռած, կատանա վախտուն հազար լիվր: Այս գումարը կվճարւի ոչ թէ թղթադրամներով, այլ ոսկով: Մի գումարտակ անյապաղ ուղարկում է վերոյիշեալ նախկին մարկիզ դը Լանտէնաքին փնտոելու համար:

Գիւղական համայնքները հրաւիրում են՝ աջակցութիւն ցոյց տալ զօրքին:

Տրւած է Գրանւիլում 1793 թւի յունիսի 2-ին»:

Ստորագրւած է. «Մառնի պրիէր»:

Իսկ ցածը մանր տառերով շարւած էր:

«Մարկիզ դը Լանտէնաքի անձնաւորութիւնը հաստատելուն պէս՝ նա կգնդակահարւի: Հօվէն»:

— Հօվէն... դուրս թռաւ մարկիզի բերանից:

Նա խոր մտածմունքի մէջ ընկաւ և երկար կանգնած մնաց՝ աչքը աֆիշից չհեռացնելով:

— Հօվէն... — կրկնեց նա:

Եւ գլխարկը քաշելով աչքերին՝ կզակի տակ կապեց իր ծովային անթիւ վերարկուի կապիշօնը և արագ քայլերով ցած իջաւ հողաթմբի վրայից: Նա առաջ անցաւ նախօրօք գծած ուղիով՝ զիմելով զէպի ազարակը: Նա կարծում էր, որ այնտեղ անվտանգ օթեան կգտնի:

Նա անցաւ բարձր ու թեք բլուրը, որն ամ-

բողջովին ծածկեած էր վայրի սալորենիներով: Ահա, այլևս հեռու չէ ազարակը:

Ծխի մի ահագին սխև, որ կտրաւում էր կրակի գունաւ լեզուներով, ոլորապատոյս վեր էր բարձրանում մութի մէջ: Այնտեղից, ուր ազարակն էր, լաւում էին հրացանաձգութեան ձայներ և ազաղակներ:

Հետաքրքրութիւնը յաղթեց վառնգի գիտակցութեանը: Մարկիզը բարձրացաւ բլուրը:

Այո: Ազարակի մօտ հրացանաձգութիւն էր տեղի ունենում: Փերման վառում էր: Ահաւասիկ՝ հրացանաձգութիւնը հանդարտեց: Ինչպէս երևում է մի կողմը — ո՞րը — յաղթեց:

Մարկիզն ուզում էր բլուրից իջնել, բայց արդէն ուշ էր: Նրանք, որոնք քանդում էին ազարակը՝ ցրեցին ծմակում: Նրանց ձայները լաւում էին թփերի շուրջը: Եւ աւելի բարձր, աւելի յաճախ կանչւում էր մի անուն.

— Լանտէնաք... Լանտէնաք... Մարկիզ դը Լանտէնաք...

Ինչպէս երևում է մարկիզը նկատել էր: Ինչպէս երևում է մարկիզը կորաւ:

Նրա շուրջը, ծմակովը մէկ, շողշողացին սւիմներ, հրացանի փողեր ու սրեր: «Լանտէնաք» — հնչեց բոլորովին մօտիկ, և ցածը՝ նրա ոտքերի մօտ, վայրի սալորենիների թփերի մէջ երևացին գաժան գէմքեր:

Նա մենակ էր: Նա կանգնած էր մի բարձր

տեղ և անտառի բոլոր ծայրերից տեսանելի էր: Նա հանեց գլխարկը, բարձրացրեց եզրը մի կողմից, վայրի սալորենու թփից կտրեց մի երկար շոր փուշ, զբաւանից հանեց սպիտակ գզականիշը, բարձրացրած եզրի հետ միասին փշով խրեց այն գլխարկի վերին մասին, հագաւ գլխարկը և դիմելով ամբողջ անտառին՝ բարձր ձայնով ասաց.

— Ես նա եմ, ում փնտռում էք դուք: Ես մարկիզ դը Լանտէնաքն եմ, Վիկտուա դը Ֆօնտէնէն, բրէտօնական պրինցը, թագաւորական զօրքերի զօրավարը: Կրակէ՛ք... Զա՛րկ...

Եւ երկու ձեռքով մէկից բանալով իր կաշե մուշտակի փէշերը՝ մերկացրեց կուրծքը: Նա իջեցրեց աչքերը՝ մտածելով, թէ ցածում իր դէմ ուզող ինչ հրացանի փողեր կտեսնի, և տեսաւ՝ իրեն շրջապատած ծնկաչօք մարդկանց: Հաղաբաժան մի ազաղակ տարածւեց անտառովը մէկ.

— Կեցցէ՛ զօրավար Լանտէնաքը, մեր տէրը...

Եւ գլխարկները գէպի վեր օդի մէջ թռան:

Մի գեղեցիկ երիտասարդ վագեց, բլուրը ելաւ: Նա գետին նետեց իր գլխարկը, քանդեց թրի կապը, ծռենկ խոնարհեց մի ոտքով, կապն ու թուրը մեկնեց մարկիզին և ասաց.

— Ահա գլխաւոր հրամանատարի թուրը: Այս մարդիկ ձեզ են պատկանում: Հրամայէ՛ք, զօրավար:

Նա նշան արաւ, և թփերի միջից դուրս եկան մի քանի մարդ՝ եռագոյն դրօշակը ձեռքերում: Նրանք դրօշակը դրին մարկիզի սաքերի տոջև:

— Զօրավար, — առայ երիտասարդը, — այս դրօշակը խլեցինք կապոյաներից, որոնք գրաւել էին ազարակը: Այն ազարակը, ուր պէտք է գտնէինք ձեզ:

Մարկիզը, առանց շտապելու, հանգիստ և լուրջ կապեց թուրը: Ապա թուրը հանելով պատեանից և ցնցելով այն գլխի վերևը՝ գոռաց.

— Ոտքի ելէք: Կեցցէ՛ թագաւորը:

* * *

Իսկ ազարակի աւերակների մէջ ընկած էին «Կարմիր Գլխարկ» գումարաակի զինուորների դիակները: Բոլորն էլ բորիկ էին, կօշիկները հանել էին: Խլել էին և զէնքերը: Դիակներն ընկած էին իրար կողքի: Պարզ է. նրանց գնդակահարել, վայր էին գլորել մէկ զարկով — մտածւած, ճշտապահ:

Հսկայական գէօլը մխում էր գետնի վրա: Դա արեան գէօլն էր:

Հրգեհից զերծ մնացած ցածր պատի ետևից ցցւել էին սաքեր: Այդ սաքերը միւս բոլորից աւելի փոքր էին: Կանաչի սաքեր էին դրանք:

Դրա համար էլ կօշիկ ունէին. պատերազմում ո՛ւմ են պէտք կանաչի կօշիկները:

Կինն անշարժ պռոկած էր պատի ետևը: Նրա դէմքը մեռածի նման գունատ էր, բերանը բաց, աչքերը փակ: Կուրծքը բաց էր: Ուսի վրա սառել էր արիւնը: Անրակը փշրւած էր: Կնոջը, ինչպէս և զինուորներին, գնդակահարել էին:



Կնոջը, ինչպէս և զինուորներին, գնդակահարել էին

Աւերակների մէջ փոսի միջից դուրս ցցւեց մի գլուխ, նրա ետևից՝ միւսը: Սրանք ազարակի տէրերն էին, գիւղացիներ: Մէկը ձեռքը դրեց կնոջ կրծքի վրա և սրտի թոյլ բաբախում զգաց:

— Կենդանի է, — առայ նա:

— Իսկ երեխաներին տարան, — առայ միւ-

սը:—Երեքն էին, հա՞: Ինչպէս էր նա լալիս և
ինչպէս էին նրանք աղաղակում...

Եւ, բռունցքով սպառնալով, աւելացրեց.

— Գազաններ...

Եւ տեղն ու տեղը հառաչեց.

— Օ, Տէր իմ, Տէր իմ...

Տարած երեխաները «Կարմիր Գլխարկ» գու-
մարտակի երեխաներն էին, իսկ գետնին անզգա-
րնկած կինը նրանց մայրն էր:

Մի քանի բոպէից յետո նա ուշքի եկաւ, և
գիւղացիները՝ գլուխները խոնարհած՝ լսում էին
նրա լացը: Նա գոռում էր.

— Երեխանե՛րս: Ո՛ւր են իմ երեխաները:

Յետո լռեց: Եւ ամբողջ ժամանակը, երբ
բժշկւում էր գիւղացիները մօտ, լուռ էր: Տա-
կաւին չառողջացած՝ նա մնաք բարով ասաց գիւ-
ղացիներին.

— Պէտք է գնալ:

— Ո՛ւր:

— Երեխաներիս փնտռելու, — պատասխա-
նեց մայրը:

III

Ս Ի Մ Ո Դ Ր Գ Է Ն

Սիմուրդէնի ծնողները հասարակ գիւղացի-
ներ էին. նրան գարձրել էին քահանայ, որ դուրս
քաշեն ժողովրդական ստորին միջավայրից, իսկ
նա նորից տառապող ժողովրդի մէջ մտաւ:

Սիմուրդէնը գիտէր եւրօպական բոլոր լե-
զուները և մի քանի ուրիշներն էլ: Նա մշտա-
պէս, անդադար սովորում էր, և այդ օգնում էր
նրան ողջախոհ մնալ: Գիտութիւնը սպանել էր
նրա մէջ դէպի Աստուած ունեցած հաւատը. կրօ-
նական դօզմաներից նրա ուղեղի մէջ ոչինչ չէր
մնացել: Այն ժամանակ, ինքն իրեն քննութեան
ենթարկելով, զգաց, որ բարոյական հաշմանդամ
է և, ուժ չունենալով դէն շարտելու այն, ինչ
քահանայութիւնից մնացել էր նրա մէջ, սկսեց
մարդը կատարելագործել իր մէջ: Նրանից խլե-
ցին ընտանիքը՝ նրա ընտանիքը հայրենիքը դար-
ձաւ, նրան կին չուէին—նա ամուսնական կա-
պերով միացաւ մարդկութեան հետ: Նրան ար-
գելեցին սիրել՝ նա սկսեց ստել: Նա ատում էր

սուտը, միապետութիւնը, իր քահանայական
զգեստը: Յամառ, անդրդուելի կամքի տէր մարդ
էր: Իր բոլոր ուժերով կանչում էր ապագային:
Նա նախազգում էր այդ ապագան, նախատես-
նում էր այն, դրամայի հանգուցը պատկե-
րացնում էր իրեն՝ վրիժառուի կերպարանքով,
որը միաժամանակ ազատարար կլինի և վերջ
կդնի մարդկային բոլոր վշտերին:

1793 թւին նա յիսուն և մէկ տարին էր
մտնում:

1793 թւին յեղափոխական Ֆրանսիան թըշ-
նամիներով էր շըջապատւած: Միապետական
Ներօպան պատերազմի ելաւ Ֆրանսիայի դէմ:
Բայց այս՝ միակ վտանգը չէր յեղափոխութեան
համար: Հէնց Ֆրանսիայի մէջ քաղաքացիական
պատերազմ էր տեղի ունենում: Մերթ այստեղ,
մերթ այնտեղ խռովութիւններ և ապստամբու-
թիւններ էին բռնկւում: Յեղափոխութեան թի-
կունքը Փարիզն էր, որը պէտք է արտաքին ու
ներքին պատերազմ մղէր:

93 թիւը՝ դա Ներօպայի պատերազմն էր
Ֆրանսիայի դէմ, Ֆրանսիայինը՝ Փարիզի դէմ:
Յեղափոխութիւնը՝ դա Ֆրանսիայի ունեցած յաղ-
թութիւնն է Ներօպայի վրա և Փարիզինը՝ Ֆրան-
սիայի վրա:

93 թւի Փարիզը՝ դա զինավարժութիւններն
էին պարտէզներում և այգիներում. ամբողջ թա-
փով աշխատող զէնքի արհեստանոցները. եռա-

գոյն գզահանիչները՝ բոլոր անցորդների գլխարկ-
ների վրա. այն կանայք, որոնք ասում էին՝
«կարմիր գլխարկները սազում են մեր դէմքին»,
կարմանիօլան (յեղափոխական պար), որ պա-
րում էին փողոցներում և որի ժամանակ իրար
ուշ թէ «կաւայէր» ու «դամա» էին կանչում, այլ՝
«քաղաքացի» և «քաղաքացուհի»: սուբուած ե-
կեղեցիներ ու վանքեր. պարեր՝ աւերած եկե-
ղեցիներում, բեմի վրա վաուսղ ջահերի լոյսի
տակ. աղքատութիւն, սով, թանկութիւն, խա-
նութիւնների առջև պոչեր, որոնք երբեմն ձգւում
էին մի քանի թաղի երկարութեամբ, կոմսուհի-
ներ, մարկիզներ, կոյսեր, որոնք առևտրական
կամ արհեստաւոր էին դարձել. պճնամոլներ,
ճոխ ժարօնների մէջ, որ հեղնում էին քաղաքա-
ցիական ամուսնութիւնը և փախչում, երբ նրանց
«փուշիկաւոր» էին կանչում. պանդոկներ, ուր
եկեղեցիներից թալանած մասնատուփերով էին
զինի խմում, լրագրավաճառներ, որ գոռում էին.
«Լուրեր... վերջին լուրեր»...

Եւ ամեն մէկի գլխի վերև սաւառնում էր
զիլիօսինի ուրւականը: Եւ գերմանացիներն էին
կանգնել Փարիզի դռների առջև:

Այս բոլորի հետ միասին ժողովրդի մէջ հո-
գեկան անկման ոչ մի նշոյլ չկար: Ոչինչ, բացի
անհամբոյր ուրախութիւնից, որ վերջապէս խոր-
տակեցին գահերը: Կամաւորները թափւում էին
խմբերով իրենց կեանքն հայրենիքին առաջար-

կելով: Փոքրիկ երեխաները յեղափոխական երգեր էին թոթովում: Այդ երեխաներն իրենց մէջ մարմնացնում էին հզօր ապագան:

«Պէտք է համբերել. այժմ յեղափոխութիւն է» —ասում էին փարիզցիները:

Մի հիվանդ մեռնում էր կոկորդի վաս տեսակ ուռուցքից, որ խեղդում էր նրան: Ուռուցքը դդուկի էր, գարշահոտ, գուցէ և թունաւոր. մեռնողին փրկելու համար՝ պէտք էր անմիջապէս բաց թողնել թարախը: Միմուրդէնը պատահմամբ հիվանդի մօտ էր: Նա շրթունքները կպցրեց ուռուցքին, ծծեց այն, թքելով շարունակ, մինչ բերանը լցւում էր թարախով, և մահից ազատեց մարդուն:

— Դուք այդ կանէի՞ք թագաւորի համար:

— Ո՛չ, — պատասխանեց Միմուրդէնը, — թագաւորի համար: Ո՛չ:

Այս քայլը և այս պատասխանը նրա համար ժողովրդականութիւն ստեղծեցին Փարիզի ազքատ թաղերում:

93 Թէին նա Փարիզի չքաւոր ազգաբնակչութեան ամենաազդեցիկ, գուցէ և միակ, դեկավարն էր: Միմուրդէնը ուժեղ կերպով հուատում էր, որ սօցիալական յեղաշրջման ժամանակ միայն ծայրայեղութիւնները կարող են ուժեղ հիմք ձառայել ապագայի համար:

Միմուրդէնը արտաքուստ սովորական ազքատ մարդու տեսք ունէր. հագնում էր՝ ինչ որ

պատահէր: Երիտասարդ հասակում նա ածելում էր գլուխը: Ծերութեան հասակում ճաղատեց, և այն հազւագիւտ մաղերը, որ տակաւին մնում էին նրա գլխին, ճերմակեցին: Նրա ճակատը լայն էր: Ոտում էր հանդիսաւոր, կրքոտ և կարուկ, իշխող ձայնով: Դառը ժպիտը նրա շրթունքներից երբէք չէր անցնում:

Աշխարհիս երեսին մի մարդ կար միայն, որին Միմուրդէնը մարդավայել սիրում էր, սիրում էր որպէս որդու, բայց ոչ որպէս մարդկութեան ներկայացուցչի:

Դեռևս երիտասարդ հասակում Միմուրդէնը, որպէս դաստիարակ և ուսուցիչ, ապրում էր մի արխտօկրատ ընտանիքում: Նա ունէր մի սան, այս ընտանիքի որդին և ժառանգը, և նրան սիրում էր: Այնքան հեշտ է երեխային սիրելը: Ի՞նչ չես ների երեխային:

Միմուրդէնը խենթօրէն կապուց իր աշակերտին: Սիրում էր նրան, ինչպէս ստեղծագործողը սիրում է իր ստեղծագործութիւնը: Հարուստի ճոււղին նա մարդ դարձրեց, գուցէ և մեծ մարդ, — ի՞նչ իմանաս: Այսպէս էր, յամենայն դէպս, նա երազում: Չանել ազնւականին տւեց այն ամենը, ինչ ապրում և ածում էր հէնց իր մէջ, պատուատեց նրա մէջ իր առաքինութեան անեղ խստութիւնը, խղճահարութիւնը, նրա երակների մէջ թափեց իր համոզմունքները, իր իդէալները. այս արխտօկրատական

ուղեղին նա ժողովրդական հոգի ներշնչեց:

Գոստիարակութեան աշխատանքը վերջացած էր, ադան երիտասարդ դարձաւ, և Միմուրգէնը հարկադրեց բաժանուել նրանից: Բայց Միմուրգէնը միշտ յիշում էր նրան և յոյս ունէր հանգիստելու:

Եկաւ յեղափոխութիւնը: Միմուրգէնը չգիտէր թէ ո՞ւր է իր սանը: Իսկ ինքը ժողովրդական ամենասիրելի գեկավարներից մէկը դարձաւ:

Այժմ Միմուրգէնի անունը մոռացւած է: Բայց ԶՅ թւին նրան յարգում էին և նրա ուղղամտութիւնից ու խելքից վախենում էին Ռօբէտայիէրն ու Գանտօնը: Նոյնիսկ Մարաաը նրա առջև կորցնում էր իրեն:

Ահա թէ ինչպէս Միմուրգէնը Լանաէնաքի դէմ գործող բանակի կօմիսար նշանակուեց. երեք շաբաթ անց այն օրից, երբ մարկիզ զը Լանաէնաքը Վանդէայի ապստամբութեան գլուխն անցաւ, Փարիզում, Իլւ-Պաօն փողոցի վրա գտնուող պանդոկում ժողովի էին հաւաքուել Ռօբէտայիէրը, Գանտօնն ու Մարաաը: Իսկոյն պարզուեց տարածայնութիւնը. Ռօբէտայիէրը պնդում էր, թէ զլխաւոր ուժերը պէտք է ուղղել Վանդէայի դէմ կուելու, Գանտօնը հաստատում էր, թէ ամենուրեք փոստաւոր թշնամին՝ ներքին թշնամին է:

Եւրօպա և գաւառ — ահա այն թշնամիները, որ տեսնում էին Ռօբէտայիէրն ու Գանտօնը: Մարաաը լսում էր նրանց վէճը ու ծիծաղում էր:

— Չեղանից ամեն մէկը իր սիրած ձին ունի, — ասաց նա վերջապէս: — Գուք, Գանտօն՝ Պրուսիան, դուք, Ռօբէտայիէր՝ Վանդէան: Բայց կա էլի մի մեծ վտանգ: Այդ տեսնում եմ միայն ես: Դա փարիզեան պանդոկներն ու կաֆէներն են: Այո, փարիզեան: Այնտեղ են հաւաքուում թագաւորի կողմնակիցները: Այնտեղ են հաւաքուում ֆինանսական գատարկապորանները: Այնտեղ են հրահրում բոլոր զժբախտութիւնները՝ սովը, թանկութիւնը: Մի կաֆէն վիճում է միւսի հետ. այնտեղ ինչ ասէք, սր չի պատահում՝ կռիւներ, սկանդալներ...

— Գուք ծիծաղո՞ւմ էք մեզ վրա, Մարաա, — ընդհատեց Գանտօնը:

Մարաաի թզուկ մարմինը ծոմուեց շարութիւնից և նա դադարեց ծիծաղելուց:

— Վտանգը Փարիզումն է, — կրկնեց նա, — վտանգը միութեան բացակայութեան մէջն է, այն բանի մէջ, որ իւրաքանչիւրը, ձեր երկուսից սկսած, իրաւունք է համարում իր կողմը ձիգ տալ:

— Իսկ դո՞ւք, — գոռաց Գանտօնը: — Միթէ դուք էլ ձեր կողմը չէ՞ք քաշում:

— Մեզ զիկտատօր է պէտք, — կարուկ բացականչեց Մարաաը:

— Այո, — պատասխանեց Ռօբէտայիէրը: — Գուք կամ ես:

— Ես կամ դուք, — կրկնեց Մարաաը:

Դանտօնը փնթփնթաց.

— Դիկտատո՞ւրա ցանկացաք: Հապա մէկ փորձէք:

Եւ սրան յաջորդող խիստ, սպառնալիքներով լի վէճի մէջ ակնյայտ կերպով լուում էր յեղափոխութեան համար, գուցէ, ամենասպառնալի վտանգը՝ ղեկավարների միջև եղած տարածախտութիւնը: Աւելի ու աւելի սաստկանում էին ձայները, աւելի ու աւելի խիստ էին դառնում խօսքերը՝ թագնւած չարութիւնով լի, և արդէն մոռացել էին արտաքին ու ներքին թըշնամիներին, Ռօբէսպիէրը, Դանտօնն ու Մարատը՝ յեղափոխութեան երեք ղեկավարները՝ իրար մէջ միայն տեսնում էին թշնամիներին:

Մարտան առաջինը գոռաց՝ չկարողանալով զսպել իրեն.

— Յեղափոխութեանը պէտք չէ ոչ Դանտօն, ոչ էլ Ռօբէսպիէր:

Այդ վայրկեանին դուռը ձոնչաց և ինչ որ մէկի ձայնը հնչեց.

— Մարտ, դու իրաւացի չես:

Ներս մտաւ Սիմօնըղէնը:

— Դու իրաւացի չես, Մարտ, — կրկնեց նա: — Դու օգտակար ես, իսկ Ռօբէսպիէրն ու Դանտօնը՝ անհրաժեշտ: Ինչո՞ւ ես սպառնում նրանց: Միութիւն, միութիւն, քաղաքացիներ... Ժողովուրդը միութիւն է պահանջում:

Եւ Սիմօնըղէնը մօտեցաւ սեղանին:



Ճ.Ա.Ը

1923

Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ղեկավարները

Չկապաշա Ռօբէսպիէրը հարցրեց.

— Դուք ինչպէ՞ս մտաք այստեղ, քաղաքացի:

Մարտար լռել էր՝ անսովոր հնազանդութեամբ նայելով ներս մանողին: Դանտօնը ձեռքը մեկնեց Սիմուրդէնին:

— Օ, քաղաքացի Սիմուրդէնն այստեղ աւելորդ չէ, — ասաց նա: — Պարոններ, քաղաքացի Սիմուրդէնին բացառեք զօրծերի զրութիւնը:

— Մենք խօսում էինք Վանդէայի մասին, — մըթմըթաց Ռօբէսպիէրը:

— Վանդէայի մասին, — կրկնեց Սիմուրդէնը և աւելացրեց.

— Այո, դա մեծ սպանալիք է: Եթէ յիշատիսութիւնը մեռնի՝ կմեռնի Վանդէայի պատճառով: Պէտք է ոչնչացնել Վանդէան նրա համար, որ Ծրանսիան կարողանա ապրել:

— Վանդէան ղեկավար գտաւ, — ասաց Ռօբէսպիէրը, — նա երկիւղալի է գառնում:

— Ո՛վ է այդ ղեկավարը, քաղաքացի Ռօբէսպիէր:

— Մի ոմն կանտէնաք, նախկին մարկիզ, որն իրեն մեծարում է որպէս բրէտօնական պրինց:

Սիմուրդէնն աշխուժացաւ.

— Ես գիտեմ նրան, — ասաց նա, — ես քահանա էի նրա ծխականների մէջ:

— Նա սարսափելի է, — ասաց Ռօբէսպիէրը.

— Նա այրում է գիւղերը, կոտորում վիրաւորներին, սպանում է գերիներին, գնդակահարում կանանց:

— Կանա՞նց:

— Այո: Ուրիշների թւում նրա հրամանով գնդակահարւել է և երեք երեխաների մայրը: Ի՞նչ եղան երեխաները—յայտնի չէ... Նա իսկական հրամանատար է, նա գիտէ զինւորական արհեստը:

— Վաղո՞ւց է նա Վանդէայում, — հարցրեց Սիմուրդէնը:

— Երեք շաբաթ է:

— Նրան պէտք է օրէնքից դուրս յայտարարել:

— Արւած է:

— Պէտք է գնահատել նրա գլուխը:

— Արւած է:

— Իրամական խոշոր վարձատրութիւն խոստանալ նրան, ով կրճնի նրան:

— Արւած է:

— Ոչ թէ թղթագրամներով, այլ ոսկով:

— Արւած է:

— Նրան պէտք է գիլիօտինի վրա ուղարկել:

— Կ'արւի:

— Ո՞վ կանի այդ:

— Գուք:

— Ե՛ս...

— Հասարակական Փրկութեան Կոմիտէն

ձեզ ամենալայն լիազօրութիւններով որպէս պատգամաւոր Վանդէա կուղարկի:

— Համաձայն եմ, — ասաց Սիմուրդէնը:

Ռօբէսպիէրն արագ էր շարժւում մարդկանց յնարելու գործում դա պետական մարդու բնորոշ յատկանիշն է: Իր առջև փռւած թղթերի կոյտի տակից նա մի թերթ հանեց, որի վրա տպւած էր այս վերնագիրը. «Ճրտնտանի Հանրապետութիւն, միաձոյլ և անբաժան: Հասարակական Փրկութեան Կոմիտէ»:

— Ո՞ւմ մօտ պէտք է պատգամաւոր լինեմ, — հարցրեց Սիմուրդէնը:

Ռօբէսպիէրը պատասխանեց.

— Հանտէնաքի դէմ ուղղւած արշաւախմբի հրամանատարի մօտ: Բայց պէտք է նախազգուշացնեմ ձեզ, որ դա նախկին մի ազնւական, արիւստիկրատ է:

— Փողովուրդը ազնւականներին չի հաւատում, և նա իրաւացի է, — ասաց Սիմուրդէնը: — Ես քանոնա եմ եղել: Երբ քանոնային յանձնարարում են հետեւել մի ազնւականի, նրա վրա կրկնակի պատասխանատուութիւն է ընկնում և այսպիսի դէպքերում քանոնան պէտք է անյողողոյ լինի:

— Անկասկած, — ասաց Ռօբէսպիէրը:

— Եւ անողոք, — աւելացրեց Սիմուրդէնը:

Ռօբէսպիէրն ասաց.

— Այդ ազնւականը վաղուց չէ, ինչ ժա-

մանել է սահմանից, ուր կարողացել է արդէն աչքի ընկնել իր խելքի և քաջութեան շնորհիւ: Նա հիանալի կերպով ղեկավարում է իր արշաւախումբը: Ահա երկու շաբաթ է արդէն, ինչ արշաւախումբը իր առջև նեղում ու քշում է ձերունի կանտէնաքին:

— Բայց նա մի թերութիւն ունի, — ընդհատեց Մարատը:

— Ի՞նչ թերութիւն, — հարցրեց Սիմուրդէնը:

— Բարի սիրտ, — պատասխանեց Մարատը և շարունակեց. — Նա խիստ է կուրի ժամանակ և մեղմ է կուրից յետո: Նա շատ ներողամիտ է: Նա հակաձայն է ներելու և խնայելու: Նա հովանաւորում է կոյսերին, ազատում է ագնականների կանանց և աղջիկներին, արձակում է գերիներին ու աէրաէրներին:

— Դա խոշոր սխալ է, — ասաց Սիմուրդէնը:

— Դա ոճրագործութիւն է, — աւելացրեց Մարատը:

— Երբեմն, — նկատեց Դանտոնը:

— Յաճախ, — ասաց Ռօբէսպիէրը:

— Համարեա միշտ, — նորից պնդեց Մարատը:

— Երբ գործ ունես հայրենիքի թշնամիների հետ՝ միշտ, — ասաց Սիմուրդէնը:

— Մէկ ասա, քաղաքացի Սիմուրդէն, ինչպէս կվարէիր դու հանրապետական այն ղեկա-

վարի հետ, որը ազատ արձակէր յեղափոխութեան թշնամուն:

— Ես կհրամայէի գնդակահարել նրան:

— Կամ գլխատման ուղարկել, — աւելացրեց Մարատը:

— Այս կամ այն, ընտրութեամբ, — ասաց Սիմուրդէնը:

Մարատն ասաց.

— Այդ դէպքում միանում եմ Ռօբէսպիէրի կարծիքին: Հասարակական Փրկութեան Կոմիտէն քաղաքացի Սիմուրդէնին ամենախոշոր լիազօրութիւններով սրպէս պատգամաւոր ուղարկում է՝ դիտելու ծովափնեա բանակի արշաւախմբի հրամանատարին: Ի դէպ, ի՞նչպէս է այդ հրամանատարի անունը:

— Հօվէն, — պատասխանեց Ռօբէսպիէրը:

Սիմուրդէնը գունատեց.

— Հօվէն... Դուքս թուա նրա բերանից:

Մարատը չհեռացրեց իր հայեացքը նրա վրայից:

— Քաղաքացի Սիմուրդէն, — ասաց նա, — յա՛նձն էք առնում արտայայտւած պայմաններով հրամանատար Հօվէնի մօտ լիազօր նշանակելը: Այդ վճուած է:

— Վճուած է, — պատասխանեց Սիմուրդէնը՝ աւելի ու աւելի գունատելով:

Ռօբէսպիէրը վերցրեց իր առջև դրած գրիչը, պատրաստի ըլանկի վրա իր ուղիղ ձեռա-

գրով չորս տող դուրս բերեց և թուղթն ու գրիչը աւեց Գանտօնին: Նա էլ ստորագրեց թուղթը, իսկ նրանից յետո ստորագրեց Մարատը, որն ամբողջ ժամանակ աչքը շէր հեռացնում մեռելի պէս գունատ Սիմօնրդէնի վրայից:

Ռօբէտպիէրը թուղթը նորից վերցրեց, նշանակեց ամսաթիվը և յանձնեց Սիմօնրդէին:

Սիմօնրդէնը կարդաց.

«Հանրապետութեան II տարի.

Մըանով վկայուած է, որ քաղաքացի Սիմօնրդէնը, որը Հասարակական Փրկութեան Կօմիտէի կողմից ծովափնեա բանակի արշաւախմբի հրամանատարին կից կօմիտսար է նշանակւած, ամենալայն լիազօրութիւններ ունի:

Ռօբէտպիէր: Գանտօն: Մարատ:

28 յունիսի, 1793 թիվ»:

Ռօբէտպիէրն ասաց.

— Դուք կարող էք Հօվէնին գլխաւոր հրամանատար նշանակել և կարող էք նրան կախադան ուղարկել: Ձեզ նշանակելու հրամանը դուք կստանաք վաղը ժամը երեքին: Ե՞րբ կմեկնէք:

— Վաղը ժամը չորսին, — պատասխանեց Սիմօնրդէնը:

Մըանով էլ նրանք բաժանուեցին:

IV

Ճ Ա Մ Բ Ո Ր Գ Ը

Յունիսեան մի պարզ օր, երեկոյեան դէմ, վերջալոյսին, Կրուա-Բրանշար փոքրիկ հիւրանոցի առջև կանգ առաւ մի ձիաւոր:

Պանդոկապետը դուրս եկաւ լապտերը ձեռքին և սկսեց դիտել ճամբորդին՝ նրա լայն անթև վերարկուն, որ ուսերից ընկնում էր ձիու գաւակի վրա, նրա հանգիստ, դաժան, քանանային յատուկ դէմքը: Ճերմակ մազերը դուրս էին ցցւած անծանօթի գլխարկի լայն եզրերի տակից, և գլխարկի մախմուրին ամրացրած էր եռագոյն գզականիշը: Եռագոյն գզականիշը՝ դարանների այդ երկրում: Վերարկուի փէշերը բացւում էին՝ ազատ թողնելով ձեռքերը, այնպէս որ կարելի էր դիտել եռագոյն գօտին՝ մէջը խրած երկու ատրճանակի կոթերի հետ միասին: Յաճրում վերարկուի տակից դուրս էր ցցւում թրի ծայրը:

Պանդոկապետը հարցրեց.

— Քաղաքացի, դուք այտե՞ղ էք կանգ առնելու:

Ոչ:

— Հապա ո՞ւր էք գնում:

— Գո՛ւ:

— Բայց Գո՛ւում կուի՞վ կա:

— Ձիուս կեր տւէք, — պատասխանեց ճամբորդը:

Պանդոկապետը մի տաշտ բերեց, մէջը գաբի թափեց և արձակեց ձիու սանձերը: Յետո բերեց մի դոյլ ջուր:

— Այստեղ կանգ առէք, քաղաքացի, — աւաց նա: — Գուք երևի յոգնել էք: Նայէք ձիուն. նա բոբրովին կորել է քրտինքի մէջ:

— Ձին յոգնելու իրաւունք ունի, իսկ մարդն այդ իրաւունքը չունի:

Պանդոկապետը հարցրեց.

— Եւ դուք սիրա էք անում մենա՞կ գնալ այդ կողմերը:

Ինձ հետ պահակախումբ կա:

— Այսինքն ի՞նչպէս:

— Թուրը և տարճանակները:

— Բայց չէ՞ որ Գո՛ւում կուում են: Ձէ՞ որ անտառները լի են ապստամբներով:

Պանդոկապետը լապտերը մօտեցրեց դռան այս կողմը կպցրած թղթին և ձիաւորը կարդաց.

«Մարկիդ դը Լանտէնաքը պատիվ ունի նախազգուշացնելու իր եղբորորդի Վիկօնա Հօվէնին, որ եթէ իրեն, մարկիդին յաջողւի ձերբակալել

Վիկօնաին, առանց մտածելու կհրամայի գնդակահարել նրան»:

— Ահա և պատասխանը, — աւելացրեց պանդոկապետը:

Նա լուսաւորեց մի այլ յայտարարութիւն, որ կպցրած էր դռան միւս կողմը:

«Հօվէնը նախազգուշացնում է Լանտէնաքին, որ նա, Լանտէնաքը, կգնդակահարուի, եթէ գերի ընկնի»:

— Երէկ կարողացել են կայցնել դռանը առաջին պլակատը, իսկ այսօր առաւօտեան՝ երկրորդը: Նրանք կուում են Գո՛ւում: Հօրեղբայրը զեկավարում է սպիտակներին, եղբորորդին՝ կապոյտներին:

— Այդ աւելի է, քան ազգամիջեան պատերազմը, — փնթփնթաց ճամբորդը. — այդ պատերազմը ընտանեկան է: Թող այդպէս լինի: Փողոզուրդների մեծ վերանորոգումը էժան գնով ձեռք չի բերւում:

Եւ պաաւի նշան տւեց երկրորդ յայտարարութեանը:

— Մենք՝ քաղաքացիներս և մեծ գիւղերի բնակիչներս կանգնած ենք յեղափոխութեան կողմը, — աւաց պանդոկապետը, — իսկ գիւղացիները կուում են նրա դէմ:

Պանդոկապետը իրաւացի էր, բրետօնացի գիւղացին ապստամբել էր բռնի ազատագրման դէմ, որպէս ճնշման դէմ. սարուկներին յատուկ

է այդպիսի սխալի մէջ ընկնելը: Հանդիսաւոր-
լուրջ մի վայրենի, երկարահեր, բաց գոյնի աչ-
քերով. այսպէս է բրեւոնացի գիւղացին: Նա
կպած է իր դաշտին, իր բակին, իր ծղօտէ յար-
կին: Նա գիտէ միայն քշել իր եգները, սրել գե-
րանդին, վարել իր արար, բլիթներ թխել: Նա
ամեն մի մասուռի առջև խաչակնքում է, պա-
շտում է Ս. կոյս Աստուածածինն, և նա չհաս-
կացաւ Ֆրանսական յեղափոխութեան մեծու-
թիւնը: Նա չհասկացաւ, որ յեղափոխութիւնը
միայն կպաշտպանի նրան ազաների մշտական
լծից:

Մի գէպք էր պատահել. մի քահանա կուից
առաջ իր վիզը պարանով էր կապել. երբ օղա-
կը հանել էր, վզի վրա մնացել էր կարմիր շերտ:
Մի ուրիշ քահանա ցոյց տալով զօրքին կարմիր
շերտը՝ բացականչել էր. «Ահա յարութիւն է ա-
ռել գիլիօսինի վրա գլխատաւը: Եւ գիւղացի-
ները հաւատացել էին: Աւա՛ղ. ի՛նչպիսի ագի-
տութիւն:

— Ազնւականներն ու քահանաները Լան-
տէնաքի հետ են, — շարունակեց պանդոկապեան
իր խօսակցութիւնը ճամբորդի հետ: Հօվէնն առ
այժմ յաղթում է Լանտէնաքին: Երկուսն էլ տե-
ղական ազնւական՝ Հօվէնների տոմից են. տոմ-
մը բաժանեց երկու ճիւղի: Աւագ ճիւղի գլուխն
է համարում մարկիզ գը Լանտէնաքը, իսկ
կրտսեր ճիւղինը՝ Վիկօնտ Հօվէնը: Լանտէնաքը

գիւղացիների աչքում իրաւագօր իշխան է: Հէնց
ափ ելաւ թէ չէ, միանգամից նրան յարեց ութ
հազար մարդ: Մի շաբաթից յետո ոտքի ելաւ
մինչև երեք հարիւր ծուխ: Նա այժմ առաջ է
անցնում դէպի ծովափ: Եթէ այդ յաջողի նրան,
անգլիացիները ափ կհանեն մի գէսանտ: Բայց
Հօվէնը, նրա ցեղակիցը, կանգնեցրեց հօրեղբօրը:
Եւ էլի պատահեց, որ այդ նոյն Լանտէնաքը,
գրողը նրան տանի, կոտորեց անչափ գերիներ,
որոնց թւում հրամայեց գնդակահարել և մի կնոջ:
Այդ կինը երեք երեխա ունէր. սրանց որդեգրել
էր փարիզեան մի գումարտակ: Այժմ այդ գու-
մարտակը սարսափ է ազդում սպիտակների վրա:
Նա ոչ ոքի չի խնայում: Դա «Կարմիր Գլխարկ»
գումարտակն է: Նա այժմ բաղմաթիվ չէ, բայց
չէ՛ որ փարիզցիները դաժան մարդիկ են: Նրանք
որոշեցին կնոջ վրէժն ստնել, յետ խլել երեխա-
ներին: Ո՛ւր է տարել երեխաներին Լանտէնաքը՝
ոչ ոք չգիտէ. այդ կատաղեցնում է փարիզցի-
ներին: «Կարմիր Գլխարկ» գումարտակը մտնում
է այն զօրամասի մէջ, որ ղեկավարում է Հօվէնը:

Մի փոքր լռելուց յետո՛ պանդոկապեան ա-
ւելայրեց. ք

— Եթէ Լանտէնաքը Դօլը վերցնի և Դօլ՝
լեւան վրա հաստատի իր մարտկոցը, ափի մի
մասը կանցնի նրա ձեռքը, և անգլիացիներին
հեշտ կլինի ափ զուրս գալ: Այն ժամանակ ա-
մեն ինչ կորած է:

— Ես պէտք է շառագեմ, — ընդհատեց ձիա-
ւորը շատախօս պանդոկապետին, — ես պէտք է
գնամ:

— Այն կողմ գնալը մեծ համարձակութիւն
է. իսկ եթէ այդ վերաբերում... վերաբերում է
ձեզ շատ մօտիկ որեւէ մէկին, օրինակ, որդուն...

— Գործը մօտաւ որտալէս զրան է վերա-
բերում, — վրա բերեց ճամբորդը:

Պանդոկապետը սանձեց ձին և ստացաւ գա-
րու վարձը: Բայց միևնույն ժամանակ շարունա-
կեց խօսել.

— Երբ հասնէք այս ճանապարհի ծայրը,
այնտեղ դուք կտեսնէք մի խաչ ուղի՝ ճանա-
պարհն այնտեղ երկձիւղում է. ձախը տանում
է գէպի Գօլ, և եթէ դուք գնաք այդ ճանա-
պարհով՝ ուղղակի գժոխքը կմանէք. գնացէք
զարաուղի ճանապարհով, բռնէք աջ կողմը և ոչ
թէ ձախ:

Անձանօթը ասպանդակեց ձին, սուշ շար-
ժեկեց ճանապարհով: Չին սմբակներով փոշի էր
հանում: Ահա և խաչուղին... Խուլ լուեց պան-
դոկապետի ձայնը.


— Աջ թիբուէք:

Ճամբորդը շուռ տուեց ձախ, գէպի անտառը:

Այն ժամանակ սարսափելի էին Բրէտանի
անտառները, եօթ անտառ, որոնց աէրն էր մար-
կիզ դը Լանտէնաքը, վիկօնա Գօնտէնիէն, բրէ-
տօնական պրինցը: Անցնում էս անտառով—

խուլ, ամայի, անբնակ: Միայն կանաչ ձիւղն է
խփում գլխարկիզ կամ դէմքիզ, միայն քարն է
ձչում սմբակների հարւածների տակ:

Այո. խուլ, ամայի: Բայց ոչ անբնակ: Ան-
տառները փորփրած են ստորերկրեա անցքերով,
և գետնի տակ, որջերի մէջ, խլուրդների նման,
սպրում են մարդիկ: Անտեսանելի գորախմբեր
դարան են մտել ու սպասում են եռագոյն գգա-



Անձանօթը ասպանդակեց ձին...

կանիշ ունեցող ճամբորդին: Եռագոյն գգակա-
նիշը ֆրանսական յեղափոխութեան սիմվօլն է:
Բրէտօնական գիւղացիները, որոնք թաղել են
գետնի տակ, անխնա կսպանեն այն ճամբորդին,
որը եռագոյն գգականիշ է կրում իր գլխարկի
վրա: Անձանօթ բանակներ անցնում են գետնի
տակով: Ահա նրանք կբուսնեն գետնի տակից և,

սպոսներով՝ նորից գետին կմտնեն: Դաշտը, անտառը—բրէտօնացի խաւար գիւղացու նեցուկն են:

Ստորերկրեա գորքերը զինւած էին նիզակներով և որսորդական հրացաններով: Նրանք քանդել էին բոլոր կամուրջները, հաւաքել էին բոլոր սայլերը, այնուամենայնիւ միջոցներ էին գտնում ամեն ինչի մասին հաղորդել և նախագուշացնել մէկ մէկու: Ամբողջ երկրում, անտառից անտառ, գիւղից գիւղ, ագարակից ագարակ, խրճիթից խրճիթ, թփից թուփ պարտիզանների պայմանական պահակատեղիներ էին հաստատուած: Ինչ որ մի գորշ գեղջուկ, բուխանտարբեր գէմքով, որ ոչ մի վտանգ չէր ներշնչում, հրահանգները տանում էր փայտի մէջ, որի ներսից փորւած էր: Գաղանիքները, որ չորս հարիւր հազարից աւելի մարդ գիտէր, սրբօրէն պահւում էին: 5

Անտառները իրար հետ միանում էին ամեն տեղ ցիր ու ցան եղած մանր անտառների լաբիրինթոսով: Հնամեա ամրոցները, որոնք միաժամանակ բերդեր էին, դարձել էին ամրակուռ բանակատեղիներ. ցանկապատած բակերով ագարակները, որոնք թակարդների դեր էին կատարում, թակարդների, որոնք շրջապատւած էին խոր փոսերով ու բարձրադիր ցցապատնէշներով — այս ամենը, օղակներն էին այն ցանցի, որոնց մէջ ինձնուում էին հանրապետական գորքերը:

Սարսափելի էին այն ժամանակ, վանդէյա-

կան ապստամբութիւնների ժամանակ, Բրէտանի անտառները: Յեղափոխական գորքերը վախնում էին այնտեղ մտնել:

Գլխարկին եռագոյն գդականիշ ունեցող ճամբորդը ասպանդակեց ձին, անցնելով անտառի միջով: Որքան ուժեղ էր հեռուում թնդանօթային որոտը, այնքան աւելի շտապում էր նա:

Դժւարութեամբ էր շնչում տանջւած ձին, բայց ոչ ձիւնորի նստելու գիրքից, ոչ էլ նրանից, թէ ինչպէս էր նա քաշում սանձերը, ո՛չ էլ շարժումից յոգնածութիւն չէր երևում: Եւ դարձաներով ի սարսափելի անտառը չէր սարսափեցնում նրան:

Ահա վերջացաւ անտառը: Առաջ, առաջ էր նա սլանում, հանգիստ չտալով ոչ իրեն, ոչ ձիւն:

Բոլորովին մօտ էր հրացանածգութիւնը, բուլորովին մօտ էր Գօլը: Ահա նա: Ոչ թէ քաղաք, այլ փողոց, մեծ, հնամեա մի փողոց էր: Սիւնազարդ տները շարւած են ոչ հաւասար դժովտներից ոմանք առաջ են ցցւած, միւսները քաշւում են ետ: Այս փողոցից գատ քաղաքում եօթ նրբափողոց կար: Ոչ պատեր, ոչ դռներ, յարձակման համար բոլորովին բաց մի քաղաք: Բայց գլխաւոր փողոցի վրա որ տուն ասես՝ միջնաբերդ է: Գլխաւոր փողոցի վրա գանուղ ամեն մի տուն պէտք է կուով վերցնել:

Ճամբորդը կանգ առաւ քաղաքի մուտքի մօտ: Յետո սապանդակելով ձին՝ արագ առաջ

անցաւ գլխաւոր փողոցով. կապոյտները, կարծես
թէ, յաղթել են: Ահա Հովէնը: Նա ձեռքը մեկ-
նում է վերաւոր վանդէյացուն: Բայց ի՞նչ է
այս: Յեղափոխութիւնը վտանգի մէջ է: Հովէնը
վտանգի մէջ է:

Գլխարկին հռագոյն գրականիչ ունեցող ճամ-
բորդը խթաններով արիւնտակեց ձիու կողերը:

V

Հ Օ Վ Է Ն Ը

Հովէնը երեսուն տարեկան էր, երբ Լան-
տէնաքի զօրքերի դէմ ուղարկւած յեղափոխա-
կան զօրախմբի գլուխն անցաւ: Նրա զօրախում-
բը, որը ինքն էր հաւաքել, կազմւած էր հեռակա-
կից և հեծելազօրից. նրա մօտ կային և հեռա-
խոյզներ, և պիժներներ, և սապիօրներ, և պօն-
աօնիօրներ: Չիաքարը երեք հրանօթները ուժ
էին տալիս բանակին՝ չդժւարացնելով, սակայն,
նրա տեղափոխութիւնները: Լանտէնաքը ատում
էր Հովէնին, նախ այն բանի համար, որ սա
կռիվներում յաղթում էր նրան, ապա այն բանի
համար, որ սա իր ազգականն էր: Այդ ծծկեր
երեխան ինչպէ՞ս էր համարձակում յեղափո-
խական դառնալ: Յեղափոխական լինի այդ տղան,
լակոար, իր եղբորորդին, իր ժառանգը, քանի
որ մարկիզը ժառանգներ չունէր:

Կաթնակերը յաղթում էր ծերունուն, թէև
սա, որպէս զօրավար, գերազանցում էր եղբոր-

որդուն: Սակայն ռազմական բազզը սիրում է երես տալ երիտասարդութեանը:

Միշտ առաջինը նետուելով դէպի կռիվ՝ Հովէնը ոչ մի անգամ չէր վերաւորւել: Նրա փափուկ ձայնը տիրաբար և ուժեղ կանչում էր հրամանի խօսքերը: Օրինակ ծառայելով զինուորներին՝ նա քնում էր գետնի վրա, քամու դիմաց, անձրևի տակ, ձիւնի մէջ՝ փաթաթուելով իր անթև վերարկուի մէջ և բարի վրա դնելով իր գեղեցիկ գլուխը: Նա ոչ խմում էր, ոչ ծխում, ոչ հայհոյում և ոչ էլ աղօթում: Կովի գնալիս՝ վերցնում էր իր ճամբորդական գրքոցը. նա հոգում էր իր եղունգների, ատամների, ինչպէս և իր խիա ու մութ մազերի մաքրութեան մասին. հանգստի ժամանակ ինքն էր թափ տալիս իր զինուորական համազգեստը, որը ծակծկւել էր գնդակներից ու ձերմակել փոշուց: Նրա մէջ ինչ որ կանացիական բան կար, բայց կովի ժամանակ նա սարսափելի էր դառնում:

Լանտէնաքի իշխանութեան տակ հինգհարիւր հազար բրէտոնական զիւղացի կար: Բայց այդ մարտիկների մէջ կային կանայք, նոյնիսկ երեխաներ: Եւ միաժամանակ՝ բրէտոնական զիւղացիների գնդերը պէտք էին գալիս միայն փոքր պարտիզանական կռիվների համար: Լանտէնաքն ուզում էր անտառային վայրենիների բանակը ամրապնդել կանոնաւոր զօրքերով: Այն ժամանակ Վանդէան անառիկ կղառնար: Այն ժամանակ

նակ Հովէնը յաղթւած կլինէր:

Բայց ո՞րտեղից վերցնել կանոնաւոր զօրքեր: Ո՞րտեղից զինուորներ հաւաքել: Ո՞րտեղ ստեղծել մի ձոյլ միջուկ այս անկարգ ու յեղյեղուկ պատերազմի համար: Անգլիայում:

Եւ Լանտէնաքը վճռեց՝ զրաւել Ֆրանսիայի ծովափի մի մասը և այն յանձնել անգլիացիներին: Նա իր հետ վերցրեց վեց հազարից աւելի զինուոր զիւղացիական խմբերից ու իր ամբողջ հրետանին ու գնաց Դոլի վրա, որպէսզի զրաւելով ծովափի վրա գերիշխող Մօն-Դոլ բարձրութիւնը, այնտեղ մարտից հաստատէ և մաքրէ ծովափը դեսանտի համար:

Դոլը առնւեց առանց կովի:

Վանդէական խումբը մտնելով Դոլ՝ ցրւեց քաղաքում: Թնդանօթներն ու ռազմամթերքի արկղները հաւաքելով հին շուկայի յարկի տակ՝ յոգնած զիւղացիներն սկսեցին ուտել, խմել և տէրտորմեա գցել. ապա թաւալեցին փողոցի ամբողջ երկարութեամբ՝ կտրելով ճանապարհը իրենց մարմիններով և պաշտպանելու մասին ոչինչ չմտածելով:

Լանտէնաքը գնաց Մօն-Դոլ բարձրութիւնը դիտելու:

Նրա բացակայութեան ժամանակ նրան փոխարինեց իր օգնականը, որին «կապոյտների փոթորիկ» էին կանչում՝ յեղափոխականների վերարբերմամբ ունեցած իր դաժան արարքների

համար, և Իմանուս՝ իր զգուշի արտաքինի համար: «Իմանուս» բառը նշանակում է գերմարդկային ալլանդակ մի էակ, սատանայի կամ քաջքի նման մի բան:

Իմանուսը պահակներ կանգնեցրեց և, նրատելով գլխաւոր փողոցի տներէց մէկի շէմքին, ննջեց:

Նա երկար չննջեց: Բայց երբ վարժեց, փողոցի ծայրից նրան էին նայում երեք թնդանօթային խողովակներ: Ասաղերի թոյլ պլպլոցների տակ նրանք հագիվ էին նշմարւում:

Իմանուսը վեր թռաւ: Գոռաց:

— Ո՞վ է:

Եւ կրակեց հրացանից: Նրան պատասխանեց թնդանօթի ձայնը: Գիւղացիների քնած խուժանը մէկից վարժեց: Գեղջուկները, իրենք էլ շիմանալով թէ ինչ են անում, կրակում էին իւրայինների վրա: Տներէց զուրս էին վազում հրացանաձգութիւնից խլացած, շմած մարդիկ, վազում էին ետ, նորից առաջ էին վազում և, գլուխները կորցրած, խոնւում էին այս ընդհանուր շփոթի մէջ: Ամեն ինչ հիւսւում, խճճւում, խառնւում էր: Գնդակները սուլելով, ձեղքում էին գիշերային մթութիւնը: Հրացանի զարկերը, ծուխը, ձիերի խրխինջը, վիրաւորների աղաղակներն ու անքոցները, և այս բոլորի վրա կանչերը՝

— Կապոյանե՛րը, կապոյանե՛րը:

Այո: Հօվէնը անադմուկ մօտենալով քաղաքին՝ վերցրեց պահակները, և նրա զօրախմբի գլուխը բռնեց մեծ փողոցի ծայրերից մէկը:

Լանտէնաքը, լսելով հրացանաձգութեան ձայնը՝ նետեց դէպի քաղաք: Կապոյանե՛րը: Բայց չէ՞ որ նա գիտէր, նրան լուր բերին, թէ Հօվէնը մէկ ու կէս հազար զինւոր ունի միայն: Մի՞թէ այդ խելագարը վճռել է յարձակել իրենից քառապատիկ ուժեղ հակառակորդի վրա:

Այդ ժամանակ Իմանուսը գիւղացիներին քարշ էր տալիս դէպի շուկայի շէնքը—քարէ շինութիւնը, որն իրենից ներկայացնում էր բարձր սիւնների մի ամբողջ անտառ: Քառորդ ժամ յետո շուկան զարձաւ մի անառիկ ամրոց, սայլեր, հակեր, արկղներ, տակառներ, ամենը, ինչ որ կար շուկայի շէնքում, զործածեց բարիկաղներ շինելու համար: Դիրքերի ետեից գնդակները սլացան: Սկսեց կռիվը: Լանտէնաքը քաղաք մտաւ այն կողմից, ուր գիւղացիները դիրքեր էին շինել:

Յած թռչելով ձիու վրայից՝ նա լռելեայն ընդունեց Իմասունի զեկուցումը ու գնաց հրէտանու մօտ. կռանալով թնդանօթներից մէկի վրայ ով պատնէշի անցքի վրա ու դիտելով հակառակորդին՝ նա տեսաւ Հօվէնին:

Հօվէնը կանգնած էր՝ ձեռքերը խաչած ու նայում էր մութի մէջ: Նրա բատարէայի վրա վաւուր ջահը լուսաւորում էր նրա հասուն, լայ-

նաթիկունք մարմինը: Ահա նա կծիծաղի այն ծիծաղով, որը ծանօթ է Լանտէնաքին՝ մանկական — ուրախ ծիծաղով:

Լանտէնաքն ինքը վերցրեց թնդանօթի գլանաձև խողանակը, լցրեց թնդանօթը, ուղղեց և կրակեց: Գնդակը ծակեց տան պատը՝ հէնց Հովէնի գլխավերևը:

Լանտէնաքն արձակեց երկրորդ գնդակը: Սա մտաւ պատը Հովէնից երկու քայլ հեռու: Երրորդ գնդակով Հովէնի գլխից թռցրեց գլխարկը:

Հովէնը կռացաւ և վերցրեց գլխարկը:

— Չայրանալու բան է, — մըթմըթաց Լանտէնաքը: — Մի քիչ ցած՝ և ես կթռցնէի նրա գլուխը:

Հովէնի թնդանօթաձիգ մի զինուոր հանգցրեց ջահը: Հովէնը կորաւ խաւարի մէջ:

— Կարտէչ, — հրամայեց Լանտէնաքը:

Հովէնն իջնելով մարտկոցից՝ սկսեց խորհել գրութեան մասին: Նրա դէմ կար առնւագն, չհաշւած վիրաւոր, սպանւած և փախածներին, հինգ հազար մարտիկ, իսկ իր մօտ հազար երկու հարիւրից աւելի չէր մնացել: Եթէ խռովաբարները դուրս թռչեն ամբողջիւններից և իմանան իր խմբի փոքրաթիվ քանակի մասին, ամեն ինչ կորած է:

Հովէնը տեղացի էր: Նա գիտէր 'իօլ' քաղաքը:

Նա մի քանի բառ շնչաց աղիւտանտի ափանջին և ապա կանչեց.

— «Կարմիր Գլխարկ» գումարտակ — ինձ մօտ:

Շարքերից դուրս եկան տասներկու մարդ: Նրանց մէջ էր նաև սէրժանտ Ռադուբը, նա, որ առաջարկեց որդեգրել գնդակահարւած կնոջ երեխաներին: Նա կենդանի էր մնացել:

Ինքը թմբկահարներից եօթին վերցնելով իր հետ և հրամայելով զինւորներին հրացանները ծղօտով փաթաթել, որ քայլելիս չգնգան՝ Հովէնը տարաւ նրանց իր ետևից:

Նրանք գնում էին լուռ քաղաքի ծուռուժուռ փողոցներով: Բոլոր փեղկերը, բոլոր դռները փակ էին: Բնակիչները խցկւել էին մառանները: Մութ էր և անմարդ փողոցների խճճւած լաբիրինթոսը, որի միջով Հովէնը հաստատ տանում էր զինւորներին:

Այս քսան մարդը մտան Լանտէնաքի հինգ-հազարանոց բանակի թիկունքը:

Հրացանների վրայից ծղօտը վերցրին: Տասներկու յաղթանդամ զինւորները կանգնեցին նրբափողոցի անկեան ետևը: Եօթ թմբկահարները բարձրացրել էին իրենց փայտերը՝ սպասելով հրամանի:

Թնդանօթի զարկերը յաջորդում էին մէկը միւսին մի փոքր դադարից յետո: Եւ անա այդ դադարներից մէկի ժամանակ Հովէնն օդում ձօ-

ձեց իր թուրը և հնչիւն ձայնով գոռաց՝ մի վայր-
կեան տիրող լուսթեան մէջ:

— Երկու հարիւր մարդ դէպի աջ, երկու
հարիւրը դէպի ձախ, մնացածը ուղիղ առաջ:

Պայթեց տասներկու հրացանների գարկը,
եօթ թմբուկները թնդացրին արշաւանքը: Հօվէ-
նը հրամայում էր:

— Սւրններով, տղէրք: Ծակի՛ր:

Սա հանրապետականների սոսկալի կանչն
էր, որ սարսափ էր ազդում սպիտակներին վրա:

Զլւած էֆֆէկտ ստացւեց: Գիւղացիական
օրդան զգալով թշնամուն իր մէջքի ետև՝ երևա-
կայեց, թէ իր վրա նոր բանակ է գալիս: Եւ
հէնց այս ժամանակ հանրապետական զօրաշար-
քը, որ մեծ փողոցի ծայրն էր բռնել և մնացել
էր Հօվէնի աղիւտանտի իշխանութեան տակ,
գրո՛ տւեց և շտապ քայլերով շարժւեց դէպի
գերբերը:

Խուճապը տիրեց գիւղացիներին: Ամբողջ
այս խուժանը, մաղած ալիւրի նման քաղաքի
փողոցներով թափւեց դէպի բաց դաշտը՝ հողմից
հալածող ամպի արագութեամբ: Իմանուան իզուր
էր աշխատում փախչողներին պահել:

Մարկիդ դը Լանտէնաքն իր ձեռքով փակեց
թնդանօթի վառօթանցքը, հեռացաւ վերջինը, հե-
ռացաւ հանգիստ, չափաւոր քայլւածքով, ասելով.

— Այո, գիւղացիներին հետ ոչինչ չես անի:
Մեզ անգլիացիներ են պէտք:

Յաղթութիւնը կատարեալ է:

«Կարմիր գլխարկ» գումարտակի ղինւորնե-
րին Հօվէնն ասաց.

— Դուք տասներկու հոգի էք միայն, բայց
հազար մարտիկից էլ ուժեղ էք:

Մի քանի յանդուգն վանդէացի, կապոյտ-
ներով շրջապատւած, դեռ շարունակում էին
կռվել: Բայց անա նրանք փախուստ աւին: Մէկը
մնաց միայն: Այդ մարդը կռվում էր՝ ծածկելով
ընկերների փախուստը, բայց ինքը չէր մտածում
փախչելու մասին: Նրա հրացանն արդէն փշուր-
փշուր էր եղել: Մի ձեռքում նա բռնել էր պիս-
տօլէտը, իսկ միւսում՝ թուրը: Բայց անա նա
երերաց ու յենեց սիւնին. նրան գնդակ կպաւ:
Բայց նա ձեռքից բաց չէր թողնում թուրն ու
պիստօլէտը:

— Անձնատուր եղիր, — ասաց Հօվէնը՝ մօ-
տենալով:

Վիրաւորւածի մուշտակի տակից արիւնն էր
վազում և նրա ոտքերի տակ արդէն արեան գէօլ
էր գոյացել:

— Դու իմ գերին ես: Անունդ ի՞նչ է, —
հարցրեց Հօվէնը:

Վիրաւորը պատասխանեց.

— Մանւան պար, — անա իմ անունը:

— Դու քաջ ես, — ասաց Հօվէնը ու մեկնեց
նրան իր ձեռքը:

Վանդէացին դոռաց.

— Կեցցէ՛ թագաւորը...

Եւ հաւաքելով մնացած ոյժը՝ նա մի ձեռքով կրակեց Հովէնի վրա, իսկ միւսով իջեցրեց թուրը նրա գլխին:

Հովէնը սպանւած կլինէր, եթէ նրա և վանդէացու միջև չկանգնէր ձիաւորը, այն ճամբորդը՝ եռագոյն գդականիշը գլխարկին, որը կանգ առաւ Կրուա-Բաշար հիւրանոցի առջև:

Գնդակը կգաւ ձիուն, թրի հարեածը բաժին հասաւ մարդուն, և երկուսը՝ ձին ու ձիաւորն ընկան:

Վանդէացին ուժասպառ լինելով՝ ընկաւ մայթի վրա:

Հովէնը կուացաւ դէպի այն մարդը, որը փրկեց իր կեանքը: Թուրը կտրել էր անձանօթի դէմքը: Գէմքը ծածկուել էր արիւնով: Երևում էին միայն ճերմակ մազերը: Նա ընկած էր անզգաս: Զին սպանուել էր:

Մօտեցաւ բժիշկը և, դիտելով վէրքը՝ ասաց.

— Ոչինչ բան է. հարեածը խորն է, բայց վտանգաւոր չէ: Մենք կկարենք վէրքը, և մի շաբթից յետո նա ոտքի կեցնի:

— Բայց ո՞վ է սա, — հարցնում էր Հովէնը՝ ուշադիր նայելով անձանօթին:

— Հրամանատար, — ասաց զինւորներից մէկը, — այս մարդը հէնց նոր մտաւ քաղաք: Ես տեսա, թէ ինչպէս նա մօտենում էր Պօնոփոսի կողմից:

Բժիշկը շօշափեց վիրաւորի կողքի գրպանը, հանեց թղթամանը ու մեկնեց Հովէնին:

— Այստեղ, թղթերի մէջ, երևի, կգտնէք նրա անունը:

Սառը ջրից վիրաւորը սկսեց ուշքի գալ. նրա կուպերը թոյլ կերպով շարժւեցին: Նա քրնքօրէն նայում էր Հովէնին, որը թղթամանի մէջ գտնելով քառածալ մի թուղթ՝ կարդում էր.

«Հասարակական Փրկութեան Կօմիտէ: Քաղաքացի Սիմուրդէն»...

— Սիմուրդէն, Այդ դուք... Ի՞նչ փրկեցիք իմ կեանքը:

Սիմուրդէնը նայում էր Հովէնին՝ երջանկութեան մի աննկարագրելի արտայայտութիւնն արիւնոտ դէմքին:

Հովէնը ծնկաշոք ընկաւ նրա առջև:

— Ուսցի՛ չս, — բացականչեց նա:

— Քո հայրը, ասաց Սիմուրդէնը:

Սիմուրդէնին տարան զինւորական հիւանդանոցը, որ սարքւած էր քաղաքային խորհրդի շէնքում: Նա այստեղ պառկել և մտածում էր Հովէնի մասին:

Այդ ինքը՝ Սիմուրդէնն էր յեղափոխութեանը Հովէն տուել: Նրա աշակերտն այսուհետև հերոս էր դառել, իսկ մօտ ապագայում կարող է պատահել, որ հայրենիքի պարծանքը դառնա: Մ, այո: Հովէնը մեծ զօրավար կլինի: Նա ամբողջ Ֆրանսական բանակի գլուխը կանցնի: Նա

անեղ վրիժառու կլինի, բնաջնջող-հրեշտակ...

Վերջից առաջացած ջերմը Սիմուրգէնին չէր թողնում քնել: Յանկարծ հարևան սենեակից նա լսեց Հովէնի ձայնը:

— Նա ի՞նքն է:

— Ինչ որ մէկը, երևի հիվանդապահը, պատասխանում էր.

— Սա այն մարդն է, որ ձեզ վրա կրակեց: Նրան յաջողուել էր արգէն թագնուել նկուղում, բայց մենք գտանք նրան:

Սիմուրգէնը լսում էր, թէ ինչպէս էր Հովէնը վարում գերու հետ:

— Դու վիրաւորա՞ծ ես:

— Ես ինձ բաւականին լաւ եմ զգում գրնդակահարուելու համար:

— Կապէք նրա վէրքը և բժշկէք նրան:

— Ես ուզում եմ մեռնել:

— Դու չես մեռնի: Դու ինձ ուզում էիր սպանել յանուն թագաւորի, ես քեզ կեանք եմ պարգևում յանուն հանրապետութեան:

Սիմուրգէնը մռայլւեց՝ զարթնելով իր երազանքներից: Մրթմրթաց ընկած ձայնով.

— Այո, սա իսկապէս որ գթասիրտ է:

V I

Տ Ո Ի Ր Գ Ա Մ Ր Ո Յ Ը

Գիւղից գիւղ, ագարակից ագարակ թափառում էր մի կին: Նրա հագուստը ցնցոտիներ էր դարձել: Երբեմն նրան թոյլ էին տալիս տուն մտնել, երբեմն դուրս էին անում: Եթէ ներս չէին թողնում, նա գնում էր անտառը:

Նա անցնում էր կուրի դաշտերով, հրացանների զարկերի տակ: Ամբողջ երկիրը կուռով էր բռնւած: Ոչ մի տեղ ոչ ոստիկան կար և ոչ էլ՝ գիւղական իշխանութիւն: Նա գործ էր ունենում միայն անցորդների հետ: Եւ ամեն մի անցորդի նա հարցնում էր.

— Դուք պատահմամբ չէ՞ք տեսել, արդեօք, երեք փոքրիկ երեխաների: Երկու սղա՝ Ռէնէ Փան և Գրօ-Ալէն և մի աղջիկ՝ Փօրժէտտա: Դրանք իմ երեխաներն են: Մեծը հինգ տարեկան է, իսկ փոքրիկը՝ մի տարեկան և ութ ամսական:

Անցորդը շարժում էր գլուխն ու գնում իր ձամբով: Իսկ մայրը աչքով ձամբու դնելով նրան՝ թափառում էր հեռուները:

Նրանք, որոնք ուզում էին սպանել նրան, տարան նրա երեխաներին: Մայրը թափառում էր ապստամբւած երկրում ու փնտում էր իր երեխաներին:

Մի անգամ նա հետևեալ պատասխանն ստացաւ իր, շրթունքների վրա ապրող, սովորական հարցին.

— Ես լսել եմ, թէ տեղացի մի հարուստ ազգա կուում բռնել է երեք երեխաների ու տարել իր հետ: Գուցէ այդ ձեր երեխաներն են:

— Ո՞րտեղ է այդ մարդը, — աղաղակեց մայրը: — Ո՞րտեղ են երեխաներս:

Գիւղացին պատասխանեց.

— Գնացէք Տուրգ:

— Իսկ ի՞նչ բան է Տուրգը:

Գիւղացին բացատրեց նրան ճանապարհը և դեռ չէր վերջացրել իր խօսքը, կինն արդէն գնաց:

Իսկ այն երկրում, ուր թափառում էր կինը՝ որոնելով իր զաւակներին, շարունակւում էր ապստամբների ու հանրապետականների, Լանտէնաքի ու Հովէնի կռիվը: Հանրապետականները յաղթում էին վանդէացիներին:

Ծովափն անցնելու յոյսը կորցնելով՝ Լանտէնաքը փոքր պարտիզանական կռիվ էր մղում: Այս նոր պատերազմի համար նա իրեն նեցուկ էր ընտրել իր հայրենի Տուրգ ամրոցը:

Օգոստոսին Տուրգ ամրոցը պաշարւած էր

Հովէնի զօրախմբով: Գօլի կռիւց յետո այստեղ երկրորդ կռիվը պէտք է տեղի ունենար Հովէնի ու Լանտէնաքի միջև:

Հովէնը դիտում էր ամրոցը, Հովէնների հայրենի ամրոցը, որը բարձրանում էր սրածայր ժայռերի վրա, դիտում էր նրա մուայլ աշտարակները, քարէ կամուրջը՝ պահւած երեք խոյակների վրա, որոնք յարում էին աշտարակին:

Միմուրդէնը մօտեցաւ նրան:

— Այս ամրոցը կգրաւենք:

— Եւ Լանտէնաքը կգնդակահարւի, — վերջացրեց Հովէնը:

— Նա պէտք է գիլիօտինի վրա մեռնի:

— Ես զինւորական մարդ եմ և կողմնակից զինւորական պատժի:

— Իսկ ես յեղափոխական եմ և կողմնակից յեղափոխական պատժի:

Եւ շեշտակի նայելով Հովէնի աչքերին՝ Միմուրդէնն ասաց.

— Դարձեալ ներողամտութիւն: Ես վաղուց եմ հետևում քեզ: Ինչո՞ւ բաց թողիր Սուրբ Մարկոսի վանքի կոյսերին:

— Ես կանանց դէմ չեմ կուում, — պատասխանեց Հովէնը:

— Բայց այդ կանայք արհամարհում են ժողովուրդը: Իսկ ձեր քահանաները — ինչո՞ւ նրանց չուղարկեցիր յեղափոխական ատեանը:

— Ես ձերերի դէմ չեմ կուում:

— Երանք աւելի վտանգաւոր են, քան ջահելները: Չպէտք է խղճալ, Հօվէն: Արքայասպանները ժողովրդի ազատարարներն են:

— Եթէ ինձանից կախւած լինէր,—պատասխանեց Հօվէնը,—ես բաց կթողնէի թագաւորի որդուն: Ես երեխաների դէմ չեմ կուռում: Սիմուրգէնը մոռալեց:

— Երան, ով իրեն Մաճան Պար անւանեց, դու ներեցիր:

Հօվէնն ընդհատեց.

— Բայց նա վիրաւորւած էր: Նա անօգնական էր:

— Եւ դրանով դու մի թշնամի տւիր հանրապետութեանը,—ասաց Սիմուրգէնը: Նա փախաւ և հիմա մի ամբողջ խմբի ղեկավար է: Եթէ դու բռնես Լանտէնաքը, նրան էլ կգլխաս:

— Ո՛չ: Գիւղացիները խաւար մարդիկ են, իսկ Լանտէնաքը գիտէ, թէ ինչ է անում:

— Բայց Լանտէնաքը քո հօրեղբայրն է:

— Իսկ Ֆրանսիան իմ մայրն է:

— Լանտէնաքը ծեր է:

— Լանտէնաքը հասակ չունի: Նա մեզ օտար է, նա մատնում է մեզ անգլիացիներին: Նա հայրենիքի թշնամին է: Թող նա ինձնից գթութիւն չսպասի:

— Հօվէն, յիշիր ինչ որ ասացիր դու հիմա:

— Կյիշեմ:

— Յեղափոխութիւնը,—ասաց Սիմուրգէնը,

— որպէսզի կարողանա յաղթել՝ կարէք ունի դաժան աշխատաւորներ: Նա իր յոյսը գնում է միայն տոկուն մարդկանց վրա: Կհասնի այն օրը, երբ յեղափոխութեան արդիւնքները, իբր արգարացումներ, կժառայեն տէրրօրին:

Հօվէնը պատասխանեց.

— Ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն՝ ինչո՞ւ սարսափելի տեսք տալ դրանց: Բարին չարով չի ձեռք բերում: Յեղափոխութիւնը պէտք է հաշտութիւն լինի և ոչ թէ սարսափ: Ամենատիան ամենագեղեցիկ խօսքն է, որ երբեք արտասանել է մարդկային լեզուն: Ես մի բան գիտեմ միայն, որ եթէ չի կարելի ներել, ապա չարժէ և յաղթել: Կուրի ժամանակ թշնամի եղիր թշնամիներիդ, իսկ երբ յաղթեցիր՝ եղիր նրանց եղբայրը:

— Բայց ոչ հիմա, ոչ հիմա, երբ կռիւ է գնում, երբ թշնամին ներումին պատասխանում է թնդանօթով:

Եւ մի փոքր լռելուց յետո՛ւ Սիմուրգէնը պատասխանեց.

— Այնպիսի ժամանակներում, ինչպիսին մերն է, գթութիւնը կարող է դաւաճանութեան տեսակներից մէկը հանդիսանալ: Չգուշացիր, Հօվէն:

Եւ երկուսն էլ՝ Սիմուրգէնն ու Հօվէնը լռեցին: Դաժան ու գթասիրտ այս երկու մարդկանց մէջ մտերմութիւն կար: Երկու սկզբունք-

ների մէջ՝ թշնամութիւն: Սիմուրգէնի համար պարզ էր յազթութեան ճանապարհը՝ դա տէր-րորն էր: Յազթութեան ճանապարհը պարզ էր նաև Հօվէնի համար՝ դա գթասրտութիւնն էր: Նրանցից ո՞րն էր իրաւացի:

Աստղերն առկայծում էին երկնքում: Լուռ էր, ոչ տերևների սօսափիւն կար անտառում, ոչ խօտի շրշիւն՝ հարթութեան վրա:

Ամբոցի շուրջը վխտում էին մարդկային մութ մարմիններ: Անտառում, ծառերի տակ, ցախի թփերի միջև կրակներ էին վառում: Հօվէնի զինւորների խարոյկներն էին զրանք: Չինւորական բանակը ձգւում էր մինչև հարթութեան սկիզբը և խորանում էր անտառի ծմակում: Տուրգ ամբոցը շրջապատւած էր բոլոր կողմերից:

Բայց ահա փողի սուր ձայնը խախտեց ամառաւ պարզ գիշերի խաղաղութիւնը: Այն գալիս էր վերից, աշտարակի կտուրից: Յածից նրան պատասխանեց եղջիւրը:

Աշտարակի կտուրի վրա կանգնել էր զինւած մի մարդ: Մի անգամ էլ փչելով՝ նա խօսել սկսեց: Ամբոցը պաշարող զինւորները լսում էին:

— Ես՝ Իմանուս, կապոյտների սարսափը, ասում եմ ձեզ մարկիզ Հօվէն դը Լանսէնաքի, Վիկօստ դը Թօնտէնէի, բրէտօնական պրինցի՛ եօթ անտառների տէր, իմ տիրոջ անունից: Ահա

Թէ ինչ եմ ասում ես ձեզ. մեր ձեռքում կա երեք գերի—երեք երեխաներ: Այդ երեխաներին որդեգրել էր ձեր գումարտակներից մէկը. այդ ձեր երեխաներն են: Մենք առաջարկում ենք վերադարձնել երեքին էլ այն պայմանով, որ մեզ հնարաւորութիւն տաք ազատ դուրս գալու աշտարակից: Եթէ դուք հրաժարւէք մեր առաջարկից, ապա լսէք: Կամուրջի շէնքը երեք յարկ ունի: Յածի յարկում իմ հրամանով դրւած է վեց տակաո՛ կուպրով լի, և դարսած են հարիւր խուրձ շոր ցախ: Վերին յարկը լցւած է ծղօտով: Միջին յարկում պահւում են գրքերն ու փաստաթղթերը: Աշտարակը կամուրջի հետ միացնող երկաթէ դուռը կողպած է փականքով ու բանալին գտնւում է իմ տիրոջ ձեռքում: Այդ դռան տակ, նոյնպէս իմ հրամանով, անցք են փորել և այդ անցքի միջով անց են կացրել ծծումբով ծծւած մի պատրոյգ: Այդ պատրոյգի մի ծայրը իջեցրած է կուպրով լի տակաո՛ւ մէջ, միւսն ալստեղ՝ աշտարակումն է: Նա իմ ձեռքի տակ կլինի, և ես կարող եմ այրել այն, հէնց որ կարևոր գտնեմ: Եթէ դուք հրաժարւէք՝ դուրս թողնել մեզ, մենք երեխաներին կտեղաւորենք կամուրջի ամբոցի երկրորդ յարկում և նրանց վրա կփակենք երկաթէ դուռը: Եթէ դուք յարձակում գործէք կամուրջի վրա, դուք ինքներդ կայրէք ամբոցը, իսկ եթէ յարձակում գործէք պատնէշի ձեղքւածքի միջով, ապա մենք կվառենք ամբո-

ցը: Եթէ դուք ուզէք միաժամանակ երկու կողմից էլ յարձակել մեզ վրա, մենք կրակ կտանք ամբողջը ընդհանուր ուժերով: Սպասում եմ ձեր պատասխանին. ընդունում էք, արդեօք, մեր առաջարկը, թէ ոչ:

Եւ Սիմուրդէնը պատասխանեց նրան ներքեից.

— Մենք հրաժարուում ենք:

Իսկ Հօվէնն աւելացրեց.

— Մենք ձեզ քսանուչորս ժամ ենք տալիս՝ մտածելու, բայց առանց որևէ պայմանի յանձնուելու: Վաղը, հէնց այս նոյն ժամին, եթէ դուք անձնատուր չէք լինի, մենք կսկսենք յարձակումը:

— Եւ այն ժամանակ՝ էլ ներում չսպասէք, — վերջացրեց Սիմուրդէնը:

Իմանուսի կողքին, աշտարակի վերնատանը երևաց մարկիզ զը Լանտէնաբի Ֆիգուրան:

— Այդ դո՛ւ ես, քահանա՛, — գոռաց Լանտէնաքը:

— Այդ ես եմ, դաւաճա՛ն, — պատասխանեց Սիմուրդէնը:

* * *

Իսկ Տուրգ ամբողջում փակւած երեխաների մայրն արդէն բոլորովին մօտ էր ամբողջին: Նա շտապում էր, նա համարեա թէ վազում էր:

Գիւղերից մէկում նա մօտեցաւ գիւղացիներին և բուրժուաների ամբոխին, որը լսում էր քաղաքային տան պատշգամբից կարդացող մունեաիկին:

Նա իրար ետևից կանչում էր անունները և իւրաքանչիւր անւան աւելացնում էր՝ «աւագակ»: Այդ անուններից միայն մէկն էր ծանօթ կնոջը՝ Լանտէնաքը:

Տասնևինն անուն թւեց մունետիկը:

«Վերոյիշեալ բոլոր անձինք, ուր էլ որ բռնւին նրանք, նրանց անձնաւորութիւնները ստուգելուն պէս, անյապաղ կպատժւին, և ամեն մէկը, ով կհիւրընկալի նրանց իր մօտ և կօգնի փախչելու՝ կյանձնւի զինւորական դաշտային դատարանին ու կպատժւի: Ստորագրւած է՝ Հասարակական Փրկութեան Կօմիտէի պատգամաւոր՝ Սիմուրդէն»:

Եւ մունետիկը շարունակեց կարգալ.

«Կառավարութեան վերոյիշեալ կարգադրութեան համաձայն, մահւան պատժի սպառնալիքով, արգելում է օգնութիւն և օժանդակութիւն ցոյց տալ վերևում թւած տասնևիննը խոռվարարներին, որոնք այժմ շրջապատւած ու փակւած են Տուրգ ամբողջի աշտարակում: Ստորագրւած է՝ Հօվէն»:

— Տո՛ւրգ, — բացականչեց մայրը:

Նրան նայեցին: Նա վայրենի տեսք ունէր իր ցնցոտիների մէջ, խելառ, սառած հայեացքով:

— Տուրգ, — կրկնեց նա անխմաստ և հեռացաւ ամբողջից:

— Խելագար, — ասաց մի բուրժուա:

— Ոչ այլ ինչ, — համաձայնեց երկրորդը:

— Գուցէ և լրտես է, — ձայն աւեց երրորդը:

— Թերևս, — համաձայնեց երկրորդը:

— Պարզապէս գող է, բանտից փախած, — ասաց չորրորդը:

— Ես էլ այդպէս եմ կարծում, — համաձայնեց երկրորդը:

— Այդպիսիներին պէտք է գնդակահարել, — կատաղեց երրորդը: — Ի՞նչ են լրտեսում, ահանջ դնում:

— Սուս... այ թէ մեզ գնդակահարեն:

Ու չորսն էլ լռեցին:

Իսկ նա, ով առաջացրեց այս խօսակցութիւնը, բազդին ապաւինած գնում էր անտառի միջով: Ոչ միայն մկանները, այլ և ոսկորները նուստ էին յոգնածութիւնից: Նա յաճախ նստում էր, էլի վեր կենում ու գնում, նորից նստում էր: Արևն իջնում էր դէպի հօրիզօնը, անտառը մթնել էր, խիտ խոտերի մէջ շէր կարելի տարբերել արահետները: Ո՛ւր գնալ: Ճի՞շտ է գնում, արդեօք:

Եւ յանկարծ նա դուրս եկաւ անտառի ծայրը: Նրա առջև տարածւում էր մանր թփերով ծածկւած հարթութիւնը:

— Կա՞ այտեղ որեէ մարդ, — կանչեց կինը: — Զայն հանիր:



Եւ յանկարծ նա դուրս եկաւ անտառի ծայրը

Եւ թնդանօթի հեռաւոր զղրդոցր պատաս-
խանեց նրան:

Կինը գնաց այն կողմը, որտեղից գալիս էր
այդ ուժեղ ձայնը: Եւ ահա հօրիզօնի ետեից
դուրս սողաց բարձր աշտարակը, ամբողջովին
շառագունած մայր մտնող արևի ճառագայթների
տակ, միայնակ, հարթութեան վայրի ընդարձա-
կութեան մէջ: Եւ նրա ետևը սևին էր տալիս
անտառի շերտը:

Այդ Տուրգ ամբոցն էր, և թնդանօթի որո-
տը՝ Հօվէնի ու Լանտէնաքի գորքերի միջև սկսւող
կովի սկիզբն էր նշանակում:

VII

Կ Ռ Ի Վ Ը

Այսպէս պատահեց. կովի հէնց սկզբում Սի-
մուրդէնը մօտեցաւ փողհարին և ասաց նրան.

Սիգնալ տուր աշտարակին:

Փողհարը փչեց փողը, և աշտարակից պա-
տասխանեց եղջիւրը:

Հօվէնն աւելի ու աւելի տձող զարմանքով
լսում էր Սիմուրդէնի և աշտարակի ծայրին կանգ-
նած Իմանուսի խօսակցութիւնը:

— Գո՞ն կլինէ՞ք, եթէ ես ձեր ձեռքն ընկնեմ,
— հարցնում էր Սիմուրդէնը:

— Մեզանից իւրաքանչիւրը սիրով կտա իր
զուլսը քոնի փոխարէն, — բացակամնչեց Իմա-
նուսը:

— Ուրեմն իմացէք. ես ինձ յանձնում եմ
ձեր ձեռքը:

Վայրենի ծիծաղի պայթիւն լսեց վերևից:
Ցածում լուռ էր: Սիմուրդէնը շարունակեց.

— Դուք իմ եղբայրներն էք: Դուք դըժ-
բախտ, մոլորւած մարդիկ էք. ես ձեր բարեկամն
եմ: Ես խնդրում եմ ձեզ, որպէս օղորմութիւն,

սպանէք ինձ ու դրանով ազատէք ձեզ: Կանգ առէք, քանի ուշ չէ: Էլի մի բուսէ և կսկսւի կոտորածը: Ինչու այսքան մարդ ոչնչացնել, երբ կարելի է երկուսին սպանել: Այո, երկուսին՝ ինձ և Լանտէնաքին: Ես առաջարկում եմ՝ Լանտէնաքին յանձնէք մեզ և վերցրէք ինձ:

Այնտեղ, վերելը, աշտարակի ծայրին Լանտէնաքը լուռ էր, իսկ Իմանուէլը բարձրաձայն գոռաց.

— Քո կաշին չարժէ նրա գլխին: Մենք հրաժարւում ենք: Դէ, ասացէք, ընդունում էք դուք մեր առաջարկը: Ամբողջում փակւած երեք երեխաներին կյանձնենք ձեզ, իսկ դուք թոյլ տւէք մեզ ազատ դուրս գալու:

— Բոլորին, բացի Լանտէնաքից:

— Յանձնել մեր տիրոջը՝ երբէ՛ք: Սկսէք յարձակումը:

Բոլոր հրացանները միանգամից պայթեցին, և կռիվն սկսւեց: Սիմուրդէնը տխուր նայում էր ամբողջին: Այսպէս, Հովէնը պէտք է ղեկավարի յարձակումը: Միայն թէ չսպանեն նրան, Հովէնին, իր աշակերտին, ոչ, ոչ թէ աշակերտին, այլ Սիմուրդէնի որդուն...

Յարձակումն ուղղւած էր դէպի ամբողջի պատերի մէջ եղած ճեղքւածքը, որն առաջացել էր այդ կռից շատ առաջ: Յեղափոխութիւնից շատ առաջ Տուրգ ամբողջի աշտարակի այդ պատը քառասունից աւելի սոնաչափ բարձրութիւն ցած

էր իջել: Պաշարւածների առջև բացւում էր անդունդի սև երախը, որ թէ վերից, թէ ցածից և թէ կողերից խճողւած էր պայթիւններից աղճատւած պատի քարէ ասափներով:

Ներսը անցքի մէջ սուլում էին զնդակները: Ներքին յարկի դահլիճում բարձրանում էին բարիկազները, որոնց վրա ձեռնամարտ էր տեղի ունենում:

-- ձեզքել դէպի առաջ,— գոռում էր Հովէնը:

— Պինգ կացէք, բարեկամներս,— բացականչում էր Լանտէնաքը:

Պատին ամբացւած ջահը լուսաւորում էր իրար կոտորող մարդկանց: Նրանք, մարդիկ, կուրացել էին ծխից ու խլացել գորգոռոցից: Բայց ծխի ու գորգոռոցի միջից նրանք խենթօրէն դիմում էին դէպի յաղթութիւն: Ոմանց համար յաղթութիւնը յեղափոխութեան ցնծութիւնն էր նշանակում, ոմանց համար՝ միապետութեան ցրնծութիւնը:

Աւերակների միջև ընկած էին վիրաւորները. կուռոյները քայլում էին դիակների վրայով, կանգնում էին թարմ վերքերի վրա, ոտքերով տրորում էին ջարդւած սակորները. վիրաւորները նստւում էին ցաւից, կծում էին իրենց վրա կանգնողների ոտքերը:

Երբեմն գորգոռոցին փոխարինում էր բուսական լուսթիւնը և այդ լուսթեան մէջ աւելի

ևս սարսափելի էր թուում կուտղների ծանր շնչառութիւնը, նրանց մուտցը, ատամների կրճատցը, նզովքները: Աշտարակից ճեղքւածքի միջով արեան տաք շիթ էր հոսում: Նա խոտերի վրայով հոսում ու կազմում էր մխացող մի լիճ: Թուում էր, թէ ինքը՝ աշտարակն էր վիրաւորւած և տրիւն էր հոսում:

Իրարանցման ուղիղ կենտրոնում, գնդակների տարափի տակ, կանգնած էր Հովէնը և հրամաններ էր արձակում: Հրացանի պայթիւնի փայլմունքի տակ նա կողքին տեսաւ իրեն ծանօթ դէմքը:

— Սիմուրդէն, — բացականչեց նա: — Ձեզ այստեղ կապանեն: Հեռացէք այստեղից:

— Ձէ որ քեզ էլ կարող են սպանել:

— Ես այստեղ հարկաւոր եմ, իսկ դուք՝ ոչ:

— Քանի որ դու այստեղ ես, ես էլ պէտք է այստեղ լինեմ:

Եւ Սիմուրդէնը մնաց Հովէնի մօտ:

— Պաշարւածներ, — բացականչեց նա, — անձնատուր եղէք: Մտածէք, չէ՞ որ դուք աւելի քիչ էք, քան մենք:

— Ինչո՞ւ համար են այդ դատարկասուութիւնները, — արձագանքեց Լանտէնաքը: — Մենք ամբողջ ունենք:

Եւ բարրիկադներից գնդակները թռան:

— Առաջ, դէպի դիրքերը, — հրամայեց Հովէնը: — Ո՞վ է ուզում դիրքերը վերցնել:

— Ես, — ասաց սէրժանտ Ռադուբը:

Եւ առջ վազելու փոխարէն նա յետ-յետ քաշեց, կռացաւ և համարեա թէ սողալով յարձակողների ոտքերի միջով, ներս սողաց աշտարակի ճեղքւածքով և անյայտացաւ: Մի՞թէ փախուտ էր այդ:

Ռադուբը, դուրս գալով անցքից, աստղերի լոյսի տակ սկսեց աշտարակը դիտել:

Այդպէս է որ կա. երկրորդ յարկում պատի մէջ եղած անցքը այնպէս էր խեղաթիւրւել պայթիւնից, որ գոյացած ճեղքւածքով մի մարդ կարող էր անցնել: Իհարկէ, դրա համար ճարպիկութիւն էր պէտք, անսովոր ճարպիկութիւն, այն ճարպիկութիւնը, որով լիովին օժտւած էր Ռադուբը:

Ոտքերի բուխ մատներով կապիկի նման նա կանգնում էր քարերի դուրս ցցւած մասերի վրա, իսկ ծունկներով, արմունկներով ու բռունցքներով յենւում էր ճեղքւածքի պատերին: Այդպէս բարձրացաւ նա գետնից քառասուն ոտնաչափ:

Ապա նա մի ջանքով վեր ելաւ ձեռքերի վրա, ծնկով յենւեց անցքի տակ գտնուող կարնիզին, ջուխտ ձեռքերով պինդ բռնեց ճաղերից, և ծուելով ամբողջ իրանով ամբարազուրայի եզրից այն կողմ, կախւեց, քառասուն ոտնաչափ ունեցող խորութեան վերև, թուրր ատամներով բռնած:

Եւ ուղիղ իր առջև Ռադուբը տեսաւ խե-

դաթիւրւած գնչով ու ուռած աչքերով մարդկային մի դէմք: Դա Իմանուան էր: Ծանր վիրաւորւած՝ նա հագիւ սողացել էր մինչև այտեղ, որպէսզի թարմ օդով ամրապնդի իր ուժերը:

Ռադուբի գօտուց դուրս քաշելով ատրճանակները՝ Իմանուսը դուրս կորդեց սուրը նրա սեղմած ասամների միջից ու սրով հարւածեց Ռադուբի ուսին: Այն ժամանակ Ռադուբը թռաւ սենեակի մէջ: Մի կողմ նետելով սուրը՝ Իմանուսը չոքեց: Նրա երկու ձեռքում մի-մի ատրբճանակ կար: Նա նշան բռնեց Ռադուբի վրա:

— Ախ, դու գգւելի ուխտ, — բացականչեց Ռադուբը: — Այդ ի՞նչ է, վրձող նայիր — դէմքի փոխարէն հում կառլէս:

Եւ, հրելով Իմանուսին՝ ձեռքով բռնեց նրա շարդւած ծնօտից:

Իմանուսը ցաւից ոռնաց և անզգա ընկաւ գետնի վրա:

Պառկիր, հաշմանգամ, ու չչարժւես, — ասաց Ռադուբը: — Ես քեզ ներում եմ. մեռիր, հայրենակից:

Նա գնաց սենեակի խորքը: Սայթաքեց: Նայեց ոտքերի տակ՝ յատակին ցրւած էին ատրճանակներ, կարաբիսներ, կուշկէտներ — մի ամբողջ զինապահեստ:

— Այստեղ մի ամբողջ արսեհալ է եղել, — բացականչեց Ռադուբը:

Եւ իւրաքանչիւր ձեռքում երկփողանի մի պիստօլետ վերցնելով՝ նա ելաւ սանդուխքի վրա, որ տանում էր դէպի երկրորդ յարկը, և ա՛յբազդ, երկուսից էլ միանգամից կրակեց դէպի ցած սանդուխքից: Ապա վերցրեց կարաբիսը, արձակեց, իսկ յետո սկսեց մուշկէտից կրակել: Եւ գոռում էր:

— Կեցցէ՛ յեղափոխութիւնը:

— Նրանք վերեւումն են, — գոռաց մարկիզը: Բարիկազը միանգամից դատարկւեց, նրա պաշտպանները դէպի սանդուխքը վազեցին:

— Փախէք երրորդ յարկը, — գոռում էր Լանտէնաքը:

Ռադուբը կանգնեց երկրորդ յարկում սանդուխքի տակ՝ դարանամուտ սպասելով փախչողներին:

Ամբողջ բոլոր պաշտպաններից միայն վեցին, նրանց թւում և Լանտէնաքին, յաջողեց վեր վազել:

Հօվէնն ու իր զինւորները թռչելով բարիկազի վրայից՝ ընկան թշնամու ետեւից և երկրորդ յարկում դէմ առան Ռադուբին:

— Ես նոյնն արի, ինչ որ դուք՝ Դօլ՛ում, հրամանատար, — գեկուցեց Ռադուբը: — Ես մտա թշնամու թիկունքը:

— Լաւ աշակերտ ես, — ժպտաց Հօվէնը: — Բայց դու վիրաւորւած ես:

— Ոչինչ բան է, հրամանատար:

Մինչ երկրորդ յարկում Հովէնը խորհրդակցում էր Սիմուրդէնի հետ յետագա գործողութիւնների մասին, երրորդ յարկում բարբիկադներ էին շինում: Սարքում էին անաարբեր, հանգիստ, յաջողութեան որևէ յոյս չունենալով:

Ամրոցի բոլոր պաշտպաններից միայն եօթն էին մնացել: Եօթերորդը Իմանուան էր: Ջարդամ ծնօտով և ուռած աչքերով նա վեր էր սողացել՝ օգտուելով այն բանից, որ Ռագուբը, կրակելով դէպի ցած՝ մէջքը դարձրել էր նրան:

Երբ յարձակումը ներքևից վերանորոգեց, Լանաէնաքն ասաց.

— Բարեկամներս, — ամեն ինչ վերջացած է: Բոլորը ծունկի իջան՝ ձեռքերում բռնած աէրօդումեան: Հրացանի կոթերի՝ սանդուխքի աստիճաններին իջած հարւածների ձայնը մօտենում էր:

Կռողներից մէկը, մի աբբատ, ոտքի կանգնելով ու աջ ձեռքում բարձրացնելով խաչելութիւնը՝ ասաց.

— Թող ձեզանից իւրաքանչիւրը հրապարակով խոստովանի իր մեղքերը:

— Ես սպանութիւններ եմ գործել:

— Յանուն Սուրբ երրորդութեան քառում եմ ձեր մեղքերը, — ասաց աբբատը: — Թող խաղաղութեամբ՝ հանգչին ձեր հոգիները:

— Ամէն, — արձագանքեցին եօթ ձայները:

— Այժմ ժամանակն է մեռնելու, — ասաց Լանաէնաքը:

— Եւ սպանելու, — աւելացրեց Իմանուանը: Մուտքը փակւած էր ծանր մագուկով: Սընդուկը ճրթճրթում էր պաշարածների հարւածների տակ:

Եւ յանկարծ երևաց, որ սենեակում ոչ թէ եօթ, այլ ութ մարդ կա: Եւ այդ ութերորդը կայտառ բացականչում էր.

— Դուք չէիք հաւատում: Իսկ ես ձեզ ասում էի, իմ պարոն: Ստորերկրեա ճանապարհը... Պատուոյ քարը...

Պատի մէջ գաղտնի ճանապարհ կար: Քարերից մէկը պտուռում էր իր առանցքի շուրջը և գոյացած ձեղքւածքի միջից երևում էին սլորապտոյտ սանդուխքի վերին աստիճանները: Այնտեղից էր եկել ութերորդ մարդը: Դա Գալմալօն էր:

— Շո՛ւտ, — շտապեցնում էր նա: — Շուտ իջէք սանդուխքով: Ես ձեզ անառ կհանեմ: Շուտ:

Բայց յաղթւածներին շտապեցնել հարկաւոր չէր: 3

Մէկը միւսի ետևից նրանք ցած էին իջնում նեղ սանդուխքով՝ առաջ թողնելով վիրաւորներին: Մարկիզը մատիտով մի քանի խօսք փորփրեց պտուռոյ քարի վրա ու գնաց միւսների ետևից:

Իմանուանը մնաց վերեր: Նա այնպէս էր վիրաւորւած, որ միևնոյն է պէտք է մեռնէր: Նա

մնաց, որպէսզի պահի պաշարածներին:

Մուռը բռնող սնդուկի յատակն արդէն ջարդել էր հրացանի կռիւների հարւածներից, իսկ խուփը՝ ծածկել սեխներով:

Իմանուան օգուեց այդ ծակերից: Մինչ նա կրակում էր սանդուխքովը ցած, ծակերից մէկի միջից դուրս ցլեց մի սեխ և Իմանուար վայրենի մի ճիչ արձակեց: Սեխը խրեց նրա փորը: Իմանուար փնթփնթաց.

— Դէ, լաւ է:

Հաւաքելով իր վերջին ուժերը՝ նա քարշ եկաւ մինչև ջահր, որ վառում էր երկաթէ դռան մօտ, հանեց այն պատի վրայից և, թեքելով ջահր՝ այրեց պատրոյկը:

Պատրոյկը վառեց, և Իմանուար փշուժբորբօքում էր այն: Բոցը պատրոյկով անցաւ երկաթէ դռան տակից ու հասաւ մինչև ամրոցի սալաշատակը:

Հպարտանալով իր ոճրագործութեամբ՝ Իմանուար ժպտաց: Նա շնջում էր.

— Ես վրէժս հանեցի նրանց երեխաներից՝ մեր փոքրիկ երեխայի համար, մեր փոքրիկ թագաւորի համար, որն այժմ տանջում է բանտում:

Եւ նա մեռաւ:

Այդ բոպէին, վերջապէս, շուռ տալով սընդուկը, ներս մտաւ Ռադուբը: Նրա ետեից ներս վազեցին Հօվէնը և բոլոր մնացածները: Սենեա-

կը դատարկ էր: Գաղանի դուռը բացող քարի վրա, լսպտերի լսյսի տակ Հօվէնը կարգաց.

«Ցտեսութիւն, պարոն վիկօնս:

Լանտէնաք»:

Գաղանի ճանապարհը ամրոցից տանում էր դէպի ձորը: Այդ ձորը խիտ ծածկւած էր խտով ու թփերով: Այնտեղ թագնւած մարդուն անհնար էր գտնել:

Երբ Մարկիզն ու Գալ՝մալօն ձորը հասան, մնացած փախստականներից արդէն ոչ ոք չկար:

— Հետեիք նրանց օրինակին, Գալ՝մալօ, — ասաց Լանտէնաքը: — Վաղը կէսօրին կհանդիպենք Հօվէնների քարի մօտ: Դու քաղցած ես:

Լանտէնաքը գրպանից հանեց մի կտոր շօկօլագ, կէս արեց, կէսը տւեց Գալ՝մալօին, իսկ միւս կէսը ինքն սկսեց ուտել:

— Այժմ հեռացիր, — ասաց նա:

Եւ Գալ՝մալօն անյայտացաւ թփերի մէջ:

Մարկիզը դր Լանտէնաքը մենակ մնաց: Կռիվ, արիւն, սպանութիւն... Ոչ, ոչինչ չի եղել: Դարձեալ, ինչպէս այն ժամանակ, երբ նա հէնց նոր էր Ֆրանսիայի ափը դուրս եկել, նա մենակ էր:

Եւ յանկարծ սարսափելի մի ճիչ հասաւ նրա ազանջին: Այդ՝ ճշում էր կինը:

— Եւ կարելի էր լսել.

Երեխաներս: Իմ երեխաները:

VIII

ԵՐԵՔ ԵՐԵՆԱՆԵՐԸ

Երբ թնդանօթի ձայնն առաջին անգամ աւետեց կուի սկիզբը, ժօրժէտտան, որն արդէն քնել էր, գլուխը բարձրացրեց, մասը երկարացրեց և քնի մէջ մամտաց:

— Բու՛մ...

Ու նորից քնեց՝ գլուխը Գրօ-Ալլէնի ուսին գնելով:

Ռէնէ-ժանի մազերը մուժ էին: Գրօ-Ալլէնին՝ շագանակագոյն, ժօրժէտտայինը՝ շէկ: Ռէնէ-ժանը իսկական փոքրիկ Հերկուլէսի տպաւորութիւն էր թողնում: Նա քնել էր փորի վրա՝ ղէմքը սուզելով բոունցքների մէջ: Գրօ-Ալլէնի ոտքերը կախ էին ընկել զամբիւղի եզրից:

Երեքն էլ ցնցոտիների մէջ էին: Այն հագուստը, որ նրանք նւէր էին ստացել «Կարմիր Գլխարկ» գումարտակից, վաղուց մաշուել էր: Երկու տղաներն էլ համարեա թէ մերկ էին, իսկ ժօրժէտտայի վրա կախ էր ընկած մի լաթ, որ մի ժամանակ չրջագգեստ է եղել:

Ռէնէ-ժանը չորս տարեկան էր, Գրօ-Ալլէնը՝ երեք, իսկ ժօրժէտտան՝ մի տարեկան և ութ ամսական: Նրանք լալիս էին, երբ նրանց բաժանեցին մօրից: Նրանք լալիս էին, երբ նրանց փակեցին ամրոցում: Բայց նրանք ախորժակով ուտում էին այն բոլորը, ինչ բերում էին նրանց համար ճաշին և ընթրիքին: Եւ իրենց շրջապատող ամեն ինչի մէջ նրանք առիթ էին գտնում՝ զւարճանալու, ծիծաղելու և խաղալու:

Նրանք չէին մտածում մահւան մասին և, երբ զարթնեցին ու պատուհանի վրա տեսան պայծառ, բոսորագոյն արշալոյսը՝ հրճւանքից քարացան:

— Գեղեցիկ է, — ասաց Ռէնէ-ժանը:

— Սոթ է, — աւելացրեց ժօրժէտտան:

— Այո-ո, շո-ոգ է, — ձգեց Գրօ-Ալլէնը:

Տուրգ ամրոցը, որ վառել էր Իմանուսը, այրւում էր: Կրակը մերթ գուրս էր թռչում, մերթ թագնւում էր ծխի մէջ՝ սլորւելով ու պտոււելով:

Ծուխը ծածկեց երկինքը ու տարածւեց հարթութեան վրա: Այրւող ամրոցից ոչ հեռու կանգնել էր Միշէլ Ֆլէշարը, Ռէնէ-ժանի, Գրօ-Ալլէնի և ժօրժէտտայի մայրը: Նա դիտում էր հրդեհը: Նա գլխի ընկաւ. պէտք է որ սա Տուրգը լինի: Բայց ո՞րտեղ են նրա երեխաները: Ի՞նչ նրանք չեն կարող այստեղ լինել, երբ ամրոցը բոցերի մէջ է: Ո՞րտեղ փնտռել նրանց, Ո՞ւր գնալ:

Քամու հոսանքը մի ակնթարթ պատուեց ծխի ծածկոցը և մերկ բերդը դուրս ցրեց յանկարծ՝ ամբողջովին, իր կամը շուրջ, ամբողջով ու աշտարակով, շացուցիչ, շողշողուն ու անաուր:

Երկրորդ յարկի պատուհանում մայրը տեսաւ իր երեխաների գլուխները:

Այդ ժամանակ նա ձշաց այն ճիշով, որը կանգնեցրեց կանտէնաքին:

— Օ, Տէ՛ր իմ... երեխաներս: Օգնեցէք... երեխաներս կայրւեն: Ո՞վ է փակել երեխաներիս այնտեղ: Չարագործներ... Օգնեցէ՛ք նրանց...

Մարկիզ դը Լանտէնաքն այս ճիշերը լսում էր ձորից, ուր դուրս էր բերել նրան զաղանի ճանապարհը: Չեւքում սղմած ունէր նա այն սենեակի բանալին, որտեղ փակւած էին երեխաները:

Մօր աղաչանքների և լաց ու կոծի հետ միասին ազմուկի մէջ լսում էին ձայներ.

— Սանդուխք:

— Սանդուխք չկա:

— Ձուր:

— Ձուր չկա:

Այդ կանչում էին Հովէնի զինւորները:

Իսկ ինքը Հովէնը, իր հետ վերցնելով քան սապեօր՝ բարձրացաւ աշտարակի երրորդ յարկի գահլիճը, որտեղ գտնուում էր զաղանի անցքն ու երկաթէ դուռը, որի ետև փակւած էին երեխաները:

Մի բան էր մտում. կտորել դուռը:

Բայց կացիները շարժում էին երկաթի վրա: Կրակն ու ծուխը հետու էին մղում Հովէնին, որը տեսնելով զաղանի անցքի բաց բերանը՝ բացականչեց յուսահատ.

— Այս ճանապարհով է փախել կանտէնաքը:

— Եւ նոյն ճանապարհով էլ վերադառնում եմ, — լսեց մի ձայն:

Եւ ստորերկրեա անցքի քարէ շրջանակի մէջ երևաց մարկիզի գլուխը:

Հովէնը երկար ժամանակ շէր տեսել նրան: Նա ետ թռաւ:

Մարկիզը, ձեռքին՝ բռնած մի փոքրիկ բանալի, անցաւ ուղիղ դէպի երկաթէ դուռը և բացեց այն: Յետո մտաւ բոցավառող ծովը, և նրա ու Հովէնի միջև ծխի ու կրակի մի պատ կանգնեց:

Միշէլ Ֆլէշարը, որ շրջապատւած էր զինւորներով, գոռում էր.

— Երեխաներս, երեխաներս այրում են...

Ռագուբը մօտեցաւ նրան ու զարմացաւ:

— Սպանւածը յարութիւն է առել: Ինչէէ, այժմ զարմանալու ժամանակը չէ: Հանգստացիր: Դրանք «Կարմիր Գլխարկ» գումարտակի երեխաներն են: Ամբողջ գումարտակից միայն ես եմ կենդանի մնացել: Ես կփրկեմ երեխաներին:

Եւ նա սկսեց մազլցել կամուրջի վրա: Բայց

պոկ եկաւ ու ընկաւ: Հրգեհը փոթորկում էր կատաղօրէն:

Ռադուբը բռունցքով սպառնաց երկնքին.

— Ահա թէ ի՞նչպէս է քո արգարադատութիւնը, Արարիչ, — բացականչեց նա:

Իսկ բոցի, ծխի միջից, ի պատասխան մօր հառաչանքների, լուում էին երեխաների ձայները. «Մայրի՛կ... Մայրի՛կ...»

Եւ յանկարծ, պատուհանում, երեխաների կողքին երևաց մարկիզ զը Լանտէնաքի Ֆիգուրան: Ծերունին ձեռքում բռնել էր երկար սանդուխքը և գգոյշ իջեցնում էր այն զէպի խորխորատը:

Ռադուբը, որ կանգնած էր ներքևը, ձեռքը մեկնեց, բռնեց սանդուխքը ու կանչեց.

— Կեցցէ՛ հանրապետութիւնը:

— Կեցցէ՛ թագաւորը, — արձագանքեց մարկիզը:

— Կանչիր քեզ համար՝ ինչ ուզում ես, փչիր՝ ինչպիսի յիմարութիւն որ ուզում ես, բայց և այնպէս պատրաստ եմ աղօթելու քո առջև, որպէս Աստծու, — փնթփնթաց Ռադուբը:

Սանդուխքը դրւած էր. այրւող շէնքի ու գետնի միջև հաղորդակցութիւն էր հաստատուած: Մօտ վազեցին մարդիկ: Քսան մարդ Ռադուբի գլխաւորութեամբ գրաւեցին աստիճանները, իւրաքանչիւրի վրա մի մարդ կանգնեցնելով:

Մարկիզն անյայտացաւ և մի վայրկեանից յետո երևաց՝ երեխաներից մէկը ձեռքին: Այդ Գրօ-Ալլէն էր: Նա գոռում էր.

— Ես վախենում եմ: Վախենում եմ:

Մարկիզը նրան տուեց Ռադուբին և տղան ձեռքից ձեռք անցնելով ընկաւ մօր գիրկը: Գրօ-Ալլէնին հետևեց Ռէնէ-Փանը: Այնուհետև ժօր-ժէտտան:

Երբ մարկիզը վերցրեց նրան իր ձեռքերի վրա, նա ժպտաց:

— Անունդ ի՞նչ է, հարցրեց Լանտէնաքը:


— Օդէտտա, — պատասխանեց նա:

Լանտէնաքը համբուրեց աղջկան, նախ քան Ռադուբին յանձնելը:

Մենակ մնալով բոցավառւող ամրոցում, նա մտածմունքի մէջ մի քանի վայրկեան կանգնած մնաց պատուհանի առջև: Այնուհետև, առանց շտապելու, գլուխը հպարտ բարձրացրած՝ անցաւ պատուհանի միջով և երեսը դարձնելով զէպի իր ոտքերի առջև սևացող խորութիւնը՝ լուռ, ուրւականի պէս խորհրդաւոր, սկսեց ցած իջնել սանդուխքով, բարձրահասակ, ուղղահայեաց ու գոռոզ:

Բոլորը սոսկումով նայում էին բարձրութիւնից իջնող այդ մարդուն:

Հէնց որ նա ցած իջաւ, հէնց որ ոտքը ամենավերջին աստիճանից գետնի վրա զրեց,



Մարկիզն մի վայրկեանսից յետոյ երեսաց՝ երեխանսն անորին

ինչ որ մէկի ձեռքն ընկաւ նրա ուսին: Նա շուռ
եկաւ:

— Ես ձերբակալում եմ քեզ, — ասաց Սի-
մուրդէնը:

— Գու իրաւացի ես, — պատասխանեց Լան-
տէնաքը:

ՀՕՎԷՆԻ ՌՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ստորերկրեա բանալը, որ գանուում էր աշտարակի ցածի յարկում, անմիջապէս բացւեց: Այնտեղ մի լամպ գրին, մի աման ջուր, զինուորական հացի կտորտանք, յատակին փռեցին յարգ:

Ծանր դուռը փակւեց, ու կանտէնաքը մենակ մնաց բանտում:

Սիմուրգէնն ասաց Հօվէնին.

— Առաւօտեան կհաւաքւի զինուորական-գաշապին դատարանը: Բայց դու դատաւորներին թուում չես լինի: Գու և կանտէնաքը — երկուսդ էլ — Հօվէնների ցեղից էք: Գու չափազանց մօտ արիւնակից ես նրան, ուստի նրա դատաւորը լինել չես կարող: Դատարանի կազմի մէջ կմտնեն երեք հոգի. մի սպա՝ կապիտան Գէշանը, մէկ ենթասպա՝ սերժանտ Ռադուբը, և ես, որպէս նախագահ: Այս բոլորը քեզ չի վերաբերում: Վաղը դատաստանն է, միւս օրը — գիլիօտինան: Վանդէան մեռաւ:

Հօվէնը ոչինչ չառարկեց: Հեռուոր եկեղե-

ցու գանգակատանը խփեց ժամը տասնեմէկը: Սիմուրգէնը գնաց, որ հոգա գլխատման համար տեղ ընտրելու, ժամ նշանակի և բոլոր անհրաժեշտ կարգադրութիւնները առ:

Հօվէնը դանդաղ քայլում էր մարգագետնի վրա, որը ներկել էր կուռում ընկածների արիւնով. գրոհը այս մարգագետնից էր սկսել աշտարակի դէմ: Ամրոցն այրւել, վերջանում էր: Ռադուբը հոգս էր քաշում Միշէլ Ֆիշերի և ազատուած երեխաների շուրջը: Զինուորները գերեզմաններ էին փորում, թաղում սպանուածներին, փաթաթում վիրաւորներին, հաւաքում էին բարրիկազը, դիակներից ազատում էին աշտարակի դանլիճներն ու սանդուխքները, մաքրում էին մարդկային սպանդանոցը:

Հօվէնը ոչինչ չէր նկատում: Փաթաթելով անթե վերարկուի մէջ, նա քայլում էր մարգագետնի վրա: Նրա վերարկուն եղբւած էր հասարակ ոսկեթելով. այսպիսի ոսկեթելը զօրարանակի հրամանատարների յատուկ նշանն էր: Հօվէնը երբեմն խոնուն հայեացք էր նետում թընդանօթաձգութիւնից առաջացած՝ աշտարակի պատի կողմը, որի մօտ կանգնած էր Սիմուրգէնի հրամանով կրկնապատկւած պահակը: Երբեմն նա բարձրացնում էր ձեռքերը, և, շղթայելով մասները, դնում էր գլխի տակ, որը ծածկւած էր վեղարով: Նա մտածում էր:

Նրա առջև դրւած էր մի հարց, որից նա

ոչ մի տեղ խոյս տալ չէր կարող: Հովէնը Լանտէնաքին ճանաչում էր որպէս եսասէրի ու բռնապետի: Լանտէնաքի մէջ կային մարդկային հոգու բոլոր վաս կողմերը. — դաժանութիւն, մորտութիւն, կուրութիւն, չար յամառութիւն, մեծամտութիւն, — և ահա այս նոյն մարդը Հովէնի աչքում այլափոխւել է: Լանտէնաքը կրակի միջից ազատեց երեխաներին՝ վտանգի ենթարկելով իրեն:

Լանտէնաքը, որ դատապարտւած, օրէնքից դուրս էր յայտարարւած, կարող էր ծլիւել: Նա անյայտացաւ անտառում: Նա կարող էր նորից դառնալ այն անեղ ուժը, ստորերկրեա մարտիկների այն դեկավարը, անտառների այն տէրը, որն այնպիսի սարսափ էր տարածում բոլորի վրա: Եւ ահա նա, կամաւոր, իր սեփական ցանկութեամբ, արհամարհեց վտանգը, ազատութիւնը, և գնաց գիմաւորելու իսկական մահւան՝ նախ նետուելով հրդեհի հնոցը, իսկ յետո իջնելով այն սանդուխքով, որը ազատարար էր բոլորի, իսկ կործանարար նրա համար:

Եւ այս բոլորը այն պատճառով միայն, որ ազատի երեք երեխաներին: Եւ ինչպէ՞ս պիտի վարւեն նրա հետ:

Նրան պատժելու են:

Եւ այս է հերոսութեան, մեծանոգի քայլի ճատուցումը... Եւ այս կատարւում է նրա՝ Հովէնի ներկայութեամբ: Եւ այս նա թո՞ղ է տալու:

Բայց չէ՞ որ նա, Հովէնը, ճանդիսաւոր կերպով յայտարարեց Սիմուրգէնին, որ ոչ մի ներում չի լինելու Լանտէնաքին:

Այո: Բայց Լանտէնաքը վերափոխւել է: Դա այլևս այն վայրենի մոլեռանդը, անողոք դահիճը չէ:

Լանտէնաքը դարձաւ հերոս և նրա արարքի մէջ Հովէնը յանկարծ արիւնակցութեան կապ զգաց նրա հետ: Դա այլևս օտար մի մարդ չէ նրան, այլ մերձաւոր ազգական՝ արիւնով ու ոգով:

Ուրեմն պէտք է ազատել Լանտէնաքին:

Փրկել յեղափոխութեան ամենավտանգաւոր թշնամուն, մի մարդու, որին երեք ամիս շարունակ չէին կարողանում բռնել և որը, վերջապէս, բռնւել է: Փրկել մի մարդու, որը յեղափոխութիւնը ճնշելու համար մտածում էր Ֆրանսիան յանձնել Անգլիային: Նրա ոչնչացումը համազօր է ազգամիջեան պատերազմի վերացմանը:

Իսկ եթէ նա ազատ արձակւի, — ինչպիսի դաժանութեամբ կձենարկի նորից իր զգւելի գործին: Ու նորից կվառւեն տներն ու գիւղերը, նորից կսկսւի գերիների կտտորածը, վիրաւորների մահացումը, կանանց գնդակահարութիւնը: Այժմ այդ ոճրագործը բռնւած է: Նա կմեռնի, նրա հետ էլ կմեռնեն խռովութիւնը, երկպառակտութիւնը, եղբայրասպան, գազանային պատերազմը:

Ինչո՞ւ, ինչի՞ համար պէտք է ազատել Լան-
տէնաքին: Նրա համար, որ նա փրկեց երեք ե-
րեխաներին:

Բայց չէ՞ որ հէնց ինքն էր ուզում նրանց
խորտակել: Նա նրանց օրօրոցները դրեց այն
սենեակում, որը որոշված էր կրակին մատնել:
Նա — հրդեհածիդ ու մարդասպան է: Նա վերջին
վայրկեանին, ճիշտ է, ինքն իրենից սարսափեց:
Նա մինչև վերջը հրէշ չմնաց — ահա և նրա մա-
տուցած ամբողջ ծագայութիւնը:

Բայց որքան չնչին է այդ ծառայութիւնը՝
համեմատած Լանտէնաքի սփրայործութիւնների
հետ:

Հովէնը տատանոււմ էր: Այդ իսկական մի
տանջանք էր:

Ուրեք կէս դիշերը, ապա առաւօտեան ժա-
մի մէկը: Հովէնը ինքն էլ չնկատեց, թէ ինչպէս
խրամատից մի քանի քայլ հեռու կանգնեց:

Հրդեհը հանդչելով, միայն թոյլ, աղօտ լոյս
էր տարածում իր շուրջը: Լոյսի բռնկումները,
ընդհատելով յանկարծ վերահաս խաւարից, բո-
լոր աւարկաներին անբնական շափերի տեսք էին
տալիս:

Հովէնը ցրւած հետևում էր կրակի ու ծխի
միջև եղած կուրին:

Յանկարծ, հրդեհատեղից դուրս թռչող բոցը
պայծառ կերպով լուսաւորեց ինչ որ բան, որ
կանգնած էր ամբոցի առջև տախտակամածի վրա:

Այդ դիլիօտինն էր: Նրա մօտ կանգնած էին
երկու մարդ:

Ուրեք ժամի երկուսը: Դանդաղ, անհաստա
քայլերով Հովէնը ուղղեց դէպի խրամատը: Պո-
հապան զինւորը պատուի նշան տւեց նրան: Հօ-
վէնը մտաւ աշտարակի ցածի դահլիճը, որը դար-
ձել էր պահականոց: Առատաղից կախած էր
լապտերը: Նա լուսաւորում էր դահլիճն այն չափ,
որ կարելի լինէր անցնել՝ առանց կոխ տալու
քնած պահապաններին:

Հրամանատարի ներս մտնելով, պառկածնե-
րից մի քանիսը ոտքի թռան, նրաց թւում և
պահակապետ սպան: Հովէնը ձեռքով ցոյց տւեց
դուռը:

— Բացէք:

Դռան փակիչները ետ քաշեցին: Հովէնը
մտաւ բանտը, և դուռը փակեց նրա ետևից:

Լանտէնաքը քայլում էր սենեակում՝ ան-
կիւնից անկիւն: Բացւող դռան ձայնից նա բար-
ձրացրեց գլուխը և լապտերը, որ դրած էր յա-
տակի վրա նրա և Հովէնի միջև, լուսաւորեց
երկուսի դէմքը: Նրանք նայեցին իրար այնպի-
սի հայեացքով, որ երկուսն էլ մեխւած մնացին
իրենց տեղերում:

— Բարև ձեզ, պարոն, — ասաց մարկիզը: —

Դուք այնքան բարի էք եղել, որ ցանկացել էք
ինձ այցելել: Շնորհակալ եմ ձեզանից: Ես շատ
ուրախ եմ՝ զրուցելու ձեզ հետ, ես արդէն
ակտում էի ձանձրանալ:

Հովէնը լուս նայում էր կանտէնաքին:

— Ես ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ այստեղ, — շարունակեց կանտէնաքը: — Լաւ նայէք. ձեր առջև ազնւական է կանգնած: Իսկ ազնւականը, գիտէք, հաւատում է Աստուծոյ, հաւատում է ընտանիքին: Նա հաւատարիմ է տրադիցիաներին, յարգում է իր նախորդներին, հետևում է իր հօր օրինակին: Նա սիրում է հաւատարիմ մնալ իր աւած խօսքին, լօյեալ լինել, իր պարտքը կատարել միապետի հանդէպ: Նա յարգում է օրէնքները, առաքինութիւնը, արդարագատութիւնը և նա հաճոյքով կգնդակահարէր ձեզ: Սակայն, ի՞նչ էք կանգնել: Բարեւ եղէք նստել: Յատակին, խնդրեմ: Այստեղ բազկաթոռներ չկան: Յետի մէջ ապրողը յատակի վրա էլ կարող է նստել:

Հովէնը լուս էր:

— Ես ցեխ եմ անւանում այն, ինչ դուք ժողովուրդ էր անւանում, — բացատրեց կանտէնաքը: — Անա այստեղ, այս սենեակում, պարոնները առաջներում նստացնում էին գեղջուկներին: Այժմ գեղջուկները պարոններին են նստացնում այստեղ: Եւ այս յիմարութիւնը կոչւում է յեղափոխութիւն:

Մարկիզը քմծիծաղ աւեց:

— Երեսունվեց ժամից յետոյ կկարեն իմ գլուխը: Այդ դեռ ոչինչ, իսկ այ, առանց ծխախոտի վատ է: Վերևում ես մոռացա իմ ծխա-

խոտը... Բայց ոչինչ: Անա թէ ի՞նչ եմ ուզում ձեզ ասել. դուք էլ նոյն ցեղիցն էք, ինչ որ ես. դուք ազնւական էք, դուք Հովէն էք: Եւ դուք անպիտան մարդ դարձաք: Թշնամիները ձեզ նայում են, որպէս շարագործի, իսկ բարեկամները, որպէս յիմարի: Այո, դուք հէնց յիմար էք: Ապուշ լինելու պատիժն ունէք դուք, պարոն:

Եւ կանտէնաքը հեղնանքով գլուխ աւեց Հովէնին: Յետո շարունակեց՝ ձեռքի բութ մատները գնելով ժիլէտի գրպանները:

— Ձեր ամբողջ պատւասիրութիւնը դուք տեսնում էք իմ ախոռապանի շափ ստորանալումէջ: Ես արդէն ձերունի էի, երբ դուք դեռ մի փոքրիկ լակոտ էիր. ես սրբում էի ձեր քիթը, դէ հիմա էլ կարբեմ: Դուք թէև մեծացել էք, բայց էլի լակոտ էք մնացել, մեծանալով դուք թղուկ էք դարձել: Այն օրւանից, երբ մենք հեռացանք իրարից, մեր ճանապարհները բաժանւեցին. ես գնացի պատւի ճանապարհով, իսկ դուք մտերմացաք զլուելի անպիտանների հետ:

Հովէնը չէր ընդհատում ձերունան, որը խօսում էր հանդիսով՝ երբեմն միայն քմծիծաղ տալով:

— Մնաս բարով, Ֆրանսիայի վեհութիւն, — ասում էր ձերունին: Ձեզպէսները, պարոն, կործանեցին հայրենիքը: Դուք ուզում էք նո՞ր մարդ դառնալ նորածնով էլ ապրէք, մարդկանցից թղուկների փոխւէք, մանրացէք: Բայց մեզ

էլ թոյլ տւէք, որ մարդ մնանք: Սղանեցէք թագաւորներին, սպանեցէք ազնւականներին, սպանեցէք քահանաներին, կեղեքեցէք, քանդեցէք, աւերեցէք, ոտնակոխ արէք հին օրէնքները, հին տրադիցիաները, հին բարքերը, շուռ տւէք գահերը, պղծէք եկեղեցիները, վերացրէք Աստծուն և պարեցէք աւերակների վրա, — այդ ձեր գործն է: Դուք դաւաճաններ ու վախկոտներ, որ վեհ քայլի, անձնագործութեան անընդունակ էք:

Մի քիչ լռելուց յետո՛ւ Լանտէնաքն աւելացրեց.

— Այժմ ես ձեզ շատ դառն ճշմարտութիւններ ասացի: Բայց ինչի՞ց պէտք է վախենամ: Ես մեռած եմ:

— Դուք ազատ էք, — ասաց Հօվէնը:

Նա մօտեցաւ մարկիզին, հանեց իր վերարկուն և գցեց Լանտէնաքի ուսերին ու աչքերին իջեցրեց կապիւշօնը: Երկուսն էլ միեւնոյն հասակն ունէին:

— Ի՞նչ ես անում, — հարցրեց մարկիզը:

Հօվէնը, շպատախանելով նրան՝ կանչեց.

— Պօրուշիկ, բացէք:

Դուռը բացւեց:

— Նեղութիւն կրէք ետեիցս փակելու, — նորից գոռաց Հօվէնը, շէմքից դուրս հրեց ապուշ կտրած մարկիզին:

Աշտարակի ներքին դահլիճը, ուր գտնուում էր պահականոցը, լուսաւորում էր միակ լապ-

տերով, որը շատ քիչ լոյս էր տալիս: Այդ թոյլ լուսաւորութեան տակ զինւորներից նրանք, որոնք չէին քնել, տեսան, թէ ինչպէս իրենց մօտով դառն ուղղութեամբ անցաւ մի բարձրահասակ մարդ, հրամանատարի ոսկեկար և կապիւշօնով վերարկուն հագին: Սրանք պատւի նշան տւին նրան, ու նա գնաց:

Պահապանը, Լանտէնաքին Հօվէնի տեղ ընդունելով, կանգնեց պահակին յատուկ կարգով, և մարկիզը զգաց իրեն ազատութեան մէջ:

Երբ նա ոտքը խոտի վրա դրեց, երբ անտանների ու գաշտերի օդը նրան թարմացրեց, նա կանգ առաւ ու մի բոպէ անշարժ մնաց: Յետո՛ր բարձրացրեց աջ ձեռքը, կոտրատեց մատները և մըթմըթաց. «Սակայն» — ու անցաւ առաջ:

Իսկ Հօվէնը փակւած մնաց ստորերկրեա բանտում:

1793 թւին զինւորական արիւրունալի նախագահը իր մէջ ամփոփում էր համարեա թէ ամբողջ դատարանական վարչութիւնը: Նա էր ընտրում դատարանի միւս անդամներին, հաստատում էր ձայնատուութեան կարգը, վարում էր հարցաքննութիւնը. նա միւսնոյն ժամանակ և դատաւոր էր, և դրութեան լիակատար տէրը:

Զինւորական դատարանի ժողովատեղը Սիմուրգէնն ընտրել էր աշտարակի նոյն ներքին դահլիճը, ուր այժմ պահականոցն էր: Սիմուրգէնը դատավարութեանը հասարակ ձև տալու կողմն էր և ուզում էր կրճատել բանտից մինչև դատարան և դատարանից մինչև էշաֆօտ տանող ճանապարհը:

Ուղիղ կէսօրին, նրա կարգադրութեան համաձայն, դատարանը բացեց իր նիստը:

Դատաւորները նստել էին սեղանի առջև երեք ծղօտէ աթոռի վրա: Սենեակը լուսաւորում էին երկու մոմերը, որ զրւած էին նրանց առջև

սեղանի վրա: Սեղանի վրա կային երկու թանաքաման, մի կարմիր զմուռա, պղնձէ կնիք, մի կոյտ մաքուր թուղթ և երկու տպագրւած պլակատներ, որոնցից մէկը օրէնքից դուրս յայտարարւած մարդկանց ցուցակն էր, միւսը՝ Կօնվէնտի դէկրետը:

Կօնվէնտի. Փարիզում գտնուող յեղափոխական խորհրդի դէկրետը պարզ էր. իւրաքանչիւր հրամանատար, որ գերի ընկած խոռվարարին թոյլ է տալիս փախչելու, դատապարտում է մահուան:

Այդ դէկրետը հրատարակել էր զեռ մինչև Սիմուրգէնի բանակ մեկնելը, բայց Մարտը, կասկածելով Սիմուրգէնի և Հօվէնի միջև եղած յարաբերութեան վերաբերմամբ, պնդեց՝ երկրորդ անգամ հաստատել այդ դէկրետը:

Միջին աթոռի վրա նստել էր Սիմուրգէնը, նրա աջ կողմը—դատարանի աւագ անդամ՝ կապիտան Հէշանը, Հօվէնի ազիւտանար, ձախ կողմը՝ կրտսերը, սէրժանա Ռադուբը:

Սիմուրգէնը նստել էր բանտի դռան ուղիղ զխմացը: Նա զդեստաւորւած էր եռադոյն գդականիչ ունեցող գլխարկով, թուրը կողքին և երկու ասրճանակները գօտու մէջ խրած: Նրա այտի վրա վառում էր սրի հարւածից գոյացած սպին, որ ստացել էր նա Հօվէնին մահից ազատելու ժամանակ:

Սիմուրգէնը կնքեց պատրաստած յայտա-

գիրը ու տւեց սուրհանդակին: Վերջինս դուրս եկաւ, նստեց ձիու վրա ու գնաց: Յայտագրի մէջ գրւած էր.

«Հասարակական փրկութեան Կոմիտէի անդամ քաղաքացիներ.

Լանտէնաքը բռնւած է և վաղը պէտք է պատժւի»:

Այնուհետև Սիմուրդէնը հրամայեց.

— Բացէք կամէրան:

Ժանդարմները ետ քաշեցին փակիչները, բացին դուռը ու կորան նրա ետևը:

Սիմուրդէնը բարձրացրեց գլուխը, ձեռքերը կրծքին խաչեց և, աչքը չհեռացնելով դռնից, գոռաց.

— Ներս բերէք բանտարկեալին:

Բացւած դռան շրջանակի մէջ երևացին երկու ժանդարմներն ու նրանց միջև՝ բանտարկեալը: Դա Լանտէնաքը չէր, այլ՝ Հովէնը:

Սիմուրդէնը ճշաց՝ ցնցւելով.

— Այդ դո՛ւ ես...

Եւ աւելացրեց շտապ.

— Ես պահանջեցի բանտարկեալին:

— Բանտարկեալը ես եմ, — ասաց Հովէնը:

— Ինչպէ՞ս թէ դու: Իսկ Լանտէնաքը:

— Լանտէնաքն ազատ է:

— Փախա՛ւ:

— Փախաւ:

— Այո, այո, հասկանում եմ, — մըթմըթաց

Սիմուրդէնը դողացող ձայնով. չէ՞ որ նա ամբողջի տէրն է, նրան յայտնի են բոլոր անցքերն ու ձանապարհները: Գետնի տակ, երևի, գաղտնի ձանապարհ կա: Նրան ոչ ոք չի օգնել, այո, ոչ ոք չի օգնել:

— Նրան օգնեցին, — ասաց Հովէնը:

— Բայց ո՞վ: Ո՛չ, չի կարող պատահել:

— Ես:

— Դու դառանցո՞ւմ ես...

— Ես մտա նրա կամէրան: Տւի նրան իմ վերարկուն, և նա գնաց, իսկ ես մնացի:

— Դու չէիր կարող այդ անել:

— Ես արի այդ:

— Այդ անկարելի է:

— Այդ այդպէս է:

— Բերէ՞ք Լանտէնաքին:

— Ես ձեզ ասացի, որ նա փախաւ:

— Դու... դու խելագարւե՛լ ես:

— Ես ճիշտ եմ ասում:

Սիմուրդէնը, դժւարութեամբ արտասանելով բառերը, ասաց.

— Այն ժամանակ դու արժանի ես...

— Մահւան, վերջացրեց Հովէնը:

Սիմուրդէնը գունատ էր և անշարժ: Նրա ճակատը ծածկւեց քրախքի խոշոր կաթիլներով:

— Ժանդարմներ, ասաց նա, — դատապարտեալին տարէք իր տեղը:

Հովէնն իջաւ տարուրէտի վրա:

— Ժանդարմներ, մերկացրէք ձեր սրերը,
— հրամայեց Սիմուրդէնը:

Զինուորական դատարաններում զա սովորական բանաձևն էր այն դէպքերում, երբ դատապարտեալին մահուան պատիժ էր սպանում:

Ժանդարմները մերկացրին սրերը:

Սիմուրդէնի ձայնը նորից հաստատ ու հանգիստ էր, երբ դիմելով Հովէնին՝ ասաց.

— Դատապարտեալ, կանգնէք:

Նա այլևս նրան «դու» չէր ասում:

Հովէնը կանգնեց:

— Զեր անո՞ւնը:

— Հովէն:

— Զեր կոչո՞ւմը:

— Հիւսիսային արիերի էկսպէդիցիօն զօրութմբի հրամանատար:

— Դուք ազգակա՞ն էք փախչող ոճրագործին:

— Ես նրա եղբոր թոռն եմ:

— Յայտնի՞ է ձեզ կօնվէնտի դէկրէտը:

— Այն, վոր դրւած է ձեր առջև սեղանի վրա՞: Այո, յայտնի է:

— Ի՞նչ կարող էք ասել դուք այդ դէկրէտի առթիվ:

— Որ ես հաստատել եմ այն իմ ստորագրութեամբ, հրամայել եմ խստիվ կատարել այն, ինչ հրահանգում է նա և կազմել եմ այն յաւելւածը ցածում, որի տակ դրւած է իմ անունը:

— Զեզ համար պաշտպան ընտրէք:

— Ես ինքս կպաշտպանեմ ինձ:

— Խօսէք:

— Ահա թէ ինչ, — սկսեց Հովէնը, — վեհանձն քայլը, որին ականատես եղա ես, ծածկեց ինձանից Լանտէնաքի բոլոր ոճրագործութիւնները: Ծերունի... փրկւած երեխաներ... այս բոլորը կանգնեց իմ և իմ պարտքի միջև: Ես մտացա այլուող զիւղերը, ամայացած դաշտերը, կոտորւած գերիները, ջարդւած վիրաւորները, գնդակահարւած կանայք, ես մտացա, որ Ֆրանսիան յանձնել էին անգլիացիներին, և ազատեցի հայրենիքի մարդասպանին: Ես մեղաւոր եմ: Ես կարող եմ աւելացնել միայն, որ ես, որպէս հրամանատար, պատրաստ էի օրինակ ծառայել, և որ դուք, ձեր հերթին, պէտք է օրինակ ծառայէք, որպէս դատաւորներ:

— Ի՞նչպիսի օրինակ:

— Ինձ մահուան դատապարտէք:

— Դուք գտնում էք, որ այդ արդարացի՞ կլինի:

— Աւելի, քան արդարացի, անհրաժեշտ է:

— Նստէք:

— Դատախազի կարճ ձայնից յետո, որն յայտարարեց դէկրէտը, Սիմուրդէնը խօսք տւեց կապիտան Նէշանին:

— Օրէնքը պարզ է, — խուլ արտասանեց Հովէնի ազիւտանտը: — Կարեկցութիւնը երբեմն

ոճրագործութիւն է լինում: Հրամանատար Հօ-
վէնը խոսվարար Լանաէնաքին օգնել է փախչե-
լու: Հօվէնը մեղաւոր է: Ես ձայն եմ տալիս
մահւան պատժի կողմը:

Եւ քարտուղարը նշանակեց. «Կապիտան
Հէշան—մահւան պատիժ»:

Հօվէնն ասաց.

— Կապիտան, ձեր վճիռը ճիշտ է: Շնոր-
հակալ եմ ձեզանից:

Պօսքը պատկանում էր Ռադուբին:

Ենկելով, նա պատելի նշան տուաւ դատա-
պարտեալին և բացականչեց.

— Ինձ էլ գլխատէք զրա հետ միասին: Ծե-
րունին փրկեց երեխաներին: Հրամանատարը
զրա համար ազատեց ծերունուն: Մարդկանց չի
կարելի պատժել լաւ քայլերի համար: Չի կտ-
րելի: Առաւել ևս, որ հրամանատար Հօվէնը չորս
ամիս շարունակ քշում էր այդ խոսվարարներին,
պաշտպանում էր հանրապետութիւնը: Ո՛չ, եթէ
դուք նրան գլխատէք— ապա ես ոչինչ չեմ հաս-
կանում:

Եւ Ռադուբը նստեց:

Սիմուրդէնը շուտ եկաւ դէպի նա:

— Ի՞նչ ձայն էք տալիս դատապարտեալի
արդարացման օգտին:

— Ես ձայն եմ տալիս, որ նրան զէնէրալ
գործնեն, — պատասխանեց Ռադուբը:

— Պատասխանէք աւելի որոշակի:

— Ես ուզում եմ, որ նրան հանրապետու-
թեան առաջին մարգը դարձնեն:

— Հարցին պատասխանէք որոշակի,

— Ես ուզում եմ, որ իմ գլուխը կտրէք
նրա գլխի փոխարէն:

— Ուրեմն, դուք արդարացման կողմն եք,
— ասաց Սիմուրդէնը:

Եւ քարտուղարը նշանակեց. «Սէրժանա Ռա-
դուբ, արդարացում»: Յետո ասաց.

— Մէկ ձայն մահւան պատժի կողմը, միւ-
սը արդարացման: Չայները բաժանեցին:

Վճիռը կախած էր այն բանից, թէ ինչ
կասի Սիմուրդէնը:

Նա վեր կացաւ տեղից, հանեց գլխարկը ու
զրեց սեղանի վրա: Այժմ նա նոյնիսկ գունատ
չէր. նրա գէմքը հողի գոյն ունէր:

Գահլիճում լուռ էր. ոչ մի բառ, ոչ մի
շշուկ:

Սիմուրդէնն արտասանեց հանդիսաւոր, ան-
շտապ, հանտատ ձայնով.

— Գատապարտեալ Հօվէն, մենք քննեցինք
ձեր գործը: Հանրապետութեան անունով զին-
ւորական դատարանը երկու ձայնի մեծամաս-
նութեամբ ընդդէմ մէկի...:

Նա կանգ առաւ: Նրա ձայնից էր կախած
Հօվէնի ապրելն ու մեռնելը: Բոլորը պահեցին
իրենց շնչառութիւնները: Սիմուրդէնը վերջա-
ցրեց.

— ... Գատապարտում է ձեզ մահւան պատժի:

Ռադուբը ընկաւ անզգա: Նրան դուրս տարան:

Սիմուրդէնը ծածկեց գլխարկն ու ասաց.

— Հօվէն, վաղը արեւածագին դուք կը պատըժուէք:

Հօվէնը կանգնեց և գլուխ աւեց դատարանին:

— Ենորհակալութիւն եմ յայտնում պարոն դատաւորներին:

— Տարէք դատապարտեալին, — հրամայեց Սիմուրդէնը:

Բանտի դռները փակւեցին Հօվէնի ետևից:

XI

ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԸ

Սիմուրդէնի համար պարզ էր. Հօվէնը ոճիր էր գործել յեղափոխութեան դէմ: Միւնսոյն է, թէ ինչ շարժառիթներով, բայց նա արձակել է վանդէյեան խռովութեան գլխաւոր յանցաւորին:

Յեղափոխական օրէնքի համաձայն նա պէտք է պատժուի: Յեղափոխական այս ուղիղ գծից չի կարող ոչ մի թեքում լինել: Եւ Սիմուրդէնի պարտականութիւնն է—պատժել իր սիրելի աշակերտին: Ինչ էլ որ լինի, Սիմուրդէնը պարտաւոր է կատարել այս պարտքը:


Բայց տեսնել Հօվէնին պատժից առաջ—այդ կարելի է: Զրուցել նրա հետ. զրանում ոչ մի ոճրագործութիւն չկա յեղափոխութեան դէմ: Զէ՞ որ Սիմուրդէնը մարդ է: Սիմուրդէնն այնպէս է սիրում Հօվէնին:

Կէս գիշերին մօտ՝ Սիմուրդէնը մտաւ այն կամէրան, ուր քնած էր Հօվէնը: Մօտեցաւ նրան, նայեց, և բռունցքները սղմեց աչքերին, ինչպէս սնում են երեխաները՝ լաց լինելու ժամանակ:

Մի րոպէ կանգնած մնաց այդպէս, առանց շար-
ժուելու: Ապա շոքեց, մեղմիվ բարձրացրեց քնա-
ծի ձեռքը և մօտեցրեց իր շրթունքներին: Նա
այլևս դատաւոր չէ: Նա մի սովորական, սիրող
մարդ է:

Հովէնն աչքերը բացեց.

— Ախ, այդ դուք էք, ուսուցիչ:



Սիմուրղէնը մտաւ կամէրան

— Ես եկել եմ ընթրելու քեզ հետ, —ասաց
Սիմուրղէնը և նստեց աշակերտի կողքին, ձգտով
վրա:

Հովէնը կիսեց սև հացի կողը և կէսը նրան
մեկնեց. յետո մատուցեց նրան ջրով ամանը:

— Առաջ դու խմիր, —ասաց Սիմուրղէնը:

Հովէնը միայն մի կուժ խմեց: Սիմուրղէնն
ազատօրէն էր խմում և միայն այս, ամբողջ խօ-
սակցութեան ընթացքում նրանից անբաժան,
ծարաւի մէջ արտայայտւում էր նրա անսովոր
յուզմունքը:

— Որքան ուրախ եմ, որ ձեզ տեսա, ու-
սուցիչ, —ասաց Հովէնը: — Չէ՞ որ դուք, միայն
դուք, ինձ քաղաքացի դարձրիք: Առանց ձեզ, ես
էլի աղա կմնայի, ես թգուկ կմեծանայի:

Եւ սկսեց զրոյցը: Այսինքն, ոչ թէ զրոյցը,
այլ վիճարանութիւնը: Ոչ մի խօսք չառեց այն
մասին, թէ ինչ կատարեց ցերեկը և ինչ կլինի
առաւօտեան, այն է՝ դատարանի ու պատժի
մասին: Այնտեղ, դատարանում, դատաւոր ու
դատապարտեալ էին, այստեղ՝ ուսուցիչ և նրան
հակաձառող աշակերտ:

Սիմուրղէնն ասում էր.

— Հաւասարութիւն պէտք է լինի բոլորի
համար և ամեն բանի մէջ, առանց շեղումների,
և բոլորի ու ամենքի վերև ուղիղ գիծը՝ օրէնքն է:

— Ախ, ուսուցիչ, —բացականչեց Հովէնը:
— Ինչ տեղ կտաք դուք ձեր հանրապետութեան
մէջ անձնագոծութեանը, անձնաւորութեանը, վի-
հանձնութեանը, դէպի մերձաւորը ունեցած սի-
բուն: Ամեն ինչ հաւասարակշռութեան բերելը
լաւ է, ամեն ինչ ներդաշնակութեան մէջ զու-
գորդելն՝ աւելի լաւ բան է:

— Գու ապրում ես ամպերի մէջ, —հակա-

ճառեց Սիմուրգէնը:— Վերագարծիր երկիր: Մենք
ուզում ենք իրագործել միայն այն, ինչ հնա-
րաւոր է:

— Բայց այն, ինչի մասին ես խօսում եմ,
հնարաւոր է: Մարդու կոչումն այն է, որ մշտա-
պէս ծանրութիւններ կրի: Մարդը ստեղծւած է
ոչ թէ նրա համար, որ շղթաներ քարշ տա, այլ
նրա համար, որ ճախրի երկրի վրա: Ես ուզում
եմ ոգու ազատութիւն, սրտերի հաւասարութիւն,
հոգիների եղբայրութիւն:

— Իէ, անա դու նորից վերացար երազնե-
րի մէջ: Բայց այդ անհասանելի է: Ասա, իսկ
այժմ դու ի՞նչ ես ուզում:

— Այն, ինչ որ կա:

— Ուրեմն դու արգարացնում ես այն ա-
մենը, ինչ որ տեղի է ունենում հիմա:

— Այո, — պատասխանեց Հօվէնին: — Որով-
հետեւ դա փոթորիկ է: Փոթորիկը միշտ դիտէ,
թէ ինչ է անում: Բաղաքակրթութիւնը վաքակ-
ւել էր ժանապատով, յեղափոխութեան մբրիկը
ցրեց այդ վարակիչ հիվանդութիւնը: Հնարաւոր
է, որ նա երբեմն վատի հետ լաւն էլ տանի:
Բայց կարո՞ղ է արդեօք այլ կերպ լինել: Չէ՞ որ
պէտք է այդպիսի մի արմատական դաւմն կա-
տարել: Այսօրեւ թոյր սարսափների միջից ես
տեսնում եմ մի նոր տաճար, որ մտքբաժ է հին
քաղաքակրթութիւնից:

Այսպէս զրուցում էին Սիմուրգէնն ու Հօ-

վէնը մինչև այն ժամանակ, երբ թմբուկների
հեռաւոր դարկը ընդհատեց նրանց: Արշալոյսի
ծագելն էին թմբկահարում:

Սիմուրգէնը կանգնեց, նայեց Հօվէնին:

— Ի՞նչի մասին ես մտածում դու հիմա:

— Ապագայի մասին, պատասխանեց Հօ-
վէնը:— Այն, ինչ տեսնում ենք այժմ՝ դաժան է:
ապագան՝ զեղեցիկ:

— Մնաս բարով, — ասաց Սիմուրգէնն ու
դուրս եկաւ:


Նա դարձեալ մարդ չէ, այլ յեղափոխական
օրէնքը իրագործող գառաւոր:

XII

Պ Ա Տ Ի Ժ Ը

Տուրզ ամրոցի պիմաց, հարթ տեղում, շորս սիւների վրա կանգնած էր տախտակամածը: Տախտակամածի մի ծայրին դիք ամրացրած էին երկու սիւներ, որոնք վերևում միացած էին գերանով, որի տակից կախւած էր մի եռանկիւնի, որը առաւօտուս բաց կապոյտ երկնքի ֆօնի վրա երևում էր սև: Տախտակամածի միւս ծայրից իջնում էր սանդուխքը: Յաճում երկու սիւների միջև, եռանկիւնու տակ, կարելի էր նշմարել շրջանակի նման ինչ որ մի բան, որը կազմւած էր երկու առանձին կտորներից, որոնք իրարից կարող էին բաժանւել, իսկ հեռանալով, կազմում էին մի կտր ծակ, իր արամագծով հաւասար մարդկային միջակ վզի մեծութեանը: Շրջանակի վերին մասը սահում էր մի խողովակի վրայով, այնպէս որ կարող էր բարձրանալ և իջնել: Այժմ շրջանակը բաժանւած էր: Երկու սիւների ոտքերի մօտ, այն սիւների, որոնք միացած էին գերանով, որից կախւած էր եռանկիւնին, ե-

րևում էր մի տախտակ, այն տախտակների նման, որոնք գործ են անում օբօրոցների համար, նա կարող էր շուտ գալ շանիրների վրա: Տախտակի կողքին մի երկար կողով կար, իսկ ասջևում, տախտակամածի ծայրի սիւների միջև մի ուրիշ քասանկիւնի գամբուղ կար: Ամեն ինչ



Տուրզ ամրոցի պիմաց կանգնած էր տախտակամածը

ներկւած էր կարմիր գոյնով, բացի երկաթէ եռանկիւնուց:

Այդ Գիլիօախնան էր:

Այսպէս լուս կանգնած էին իրար պիմաց յազմւած ամրոց Տուրզը և նրան յազմուող ապժամ անսղար պիլիօախնան:

Տաք քամին շարժում էր ցախի ծխերը. մինչ արևածագին մշուշը սողում էր խոտերի վրայով, ելնում էր արշալոյսը:

Չորս հազար զինուոր սաղմահան կարգով շարեցին ամրոցի առջև: Նրանք շրջապատեցին գիլիօտինան երեք կողմից: Գիլիօտինան պարրուպուսած էր այս երեք սաղմահան շարքերով, որպէս կենդանի պատով, երկու կողմից համնելով մինչև ձորի ապաստօտ ծայրը: Կենդանի պարիսպի չորրորդ՝ բաց կողմը խզում էր ձորի գծով և նայում էր ամրոցին: Որքան բարձրանում էր արևը, այնքան աւելի կարճանում էր գիլիօտինից խոտի վրա ընկած սուերը:

Ամրոցի բարձրութեան վրա տեղափոխեցին գասարանական սեղանը: Արևը ելնում էր աշտարակի ետևից և լուսաւորում էր Սիմուրգէնի ֆիգուրան, որ նստել էր սեղանի առջև եռագոյն գրօշների սուերի տակ: Սիմուրգէնը նստել էր անշարժ, ձեռքերը խաչած: Նա, ինչպէս որ նախօրեակին, քաղաքացիական պատգամաւորի հագուստով էր. եռագոյն գդականիշ գլխարկով, սուրը կողքին և երկու աւրճանակը դօտու մէջ խրած:

Բոլորը լուռ էին: Զինւորները կանգնել էին, հրացանները ոտքերի մօտ բանած և գլխիկոր:

Բայց ահա լուեցին խուլ ձայներ: Այդ կրէպով բաշած թմբուկի ձայներն էին զրանք: Շարքերը բաժանուեցին, թափօրը կենդանի պարիս-

պից ներս մտաւ և ուղղեց գէպի էշաֆօս:

Նախ երևացին սև թմբուկները, նրանց ետևից գրէնադէրները վաշար, այնուհետև ժանդարմների ջոկը, ապա Հօվէնը: Ժանդարմների մի ուրիշ ջոկ թափօրի վերջում:

Հօվէնը պատերազմական համազգեստ ունէր և թուրը կողքին: Նրա ոտքերին և ձեռքերին շղթաներ չկային: Նա գնում էր ազատ: Մօտենալով էշաֆօսին՝ նա նայեց ամրոցի վերնատանը և, արգէն բարձրանալով տախտակամածը՝ նա աչքը չէր հեռացնում Սիմուրգէնի մեռելային-գունաս գէմքից:

Վաշար ղեկավարող սպան բարձրացաւ նրա ետևից: Հօվէնը արձակեց իր սուրը և տւեց սողային, այնուհետև հանեց փողկապը և տւեց դահճին: Դատապարտեալին պէտք էր կապել: Գահիճը պարանը ձեռքին մօտեցաւ նրան:

Բայց այստեղ ահա զինւորները տեսնելով, որ իրենց ջահէլ հրամանատարին հիմա գնելու են գիլիօտինի դանակի տակ, ազադակեցին՝ «ինայեցէ՛ք, ինայեցէ՛ք»: Սիմուրգէնն այս ազադակները լսում էր անողոք, որպէս պարտքը:

Գահիճը կանգնեց անվճռական, չիմանալով ինչ անել:

Այդ ժամանակ Սիմուրգէնը խուլ կանչեց.

— Թող կատարւի արդարադատութիւնը:

Գահիճն այլևս չէր տատանւում:

Նա բարձրացրեց իր պարանը:

— Սպասէք, — ասաց նրան Հովէնը:

Գառնալով աշտարակի կողմը՝ նա ձեռքով հրաժեշտի նշան արու իր ուսուցչին և ասլա թող տւեց կապել իրեն: Երբ նրան կապում էին, նա ասաց դահճին.

— Ներեցէք, էլի մի բոպէ:

Եւ գոռաց.

— Կեցցէ՛ հանրապետութիւնը:

Նրան դրեցին տախտակի վրա, գլուխը կոխեցի վզկապի մէջ: Պահիճը կամաց բարձրացրեց նրա ծոծրակի վրա եղած մագերը, ասլա սզմեց զսզանակը: Եռանկիւնի դանակը ակզից շարժւեց և սկսեց սահել, նախ գանդաղ, յետո ակելի արագ: Եւ անա Հովէնի գլուխն ընկաւ կարմիր դամբիւղի մէջ:

Հէնց նոյն վայրկեանին Սիմուրղէնը գտաւ միջից գուրս քաշեց իր երկու ատրճանակներից մէկը և կրակեց իր սրտի մէջ: Նրա բերանից ժայթքեց արիւնը: Նա ընկաւ անկենդան:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Երես

| | |
|-------------------------------------|-----|
| Առաջաբան | 5 |
| I «Կլէյմօր» նաւը | 9 |
| II Կանտէնաքը | 23 |
| III Սիմուրղէն | 37 |
| IV Ճամպորդը | 53 |
| V Հովէնը | 63 |
| VI Տուրգ ամբոցը | 75 |
| VII Կոխիվը | 87 |
| VIII Երեք երեխաները | 98 |
| IX Հովէնի սճրագործութիւնը | 106 |
| X Գառաստանը | 116 |
| XI Ուսուցիչն ու աշակերտը | 125 |
| XII Պատիվը | 130 |

TABLE OF CONTENTS

Introduction

I. History of the Institution

II. Description of the Buildings

III. Description of the Grounds

IV. Description of the Library

V. Description of the Museum

VI. Description of the Botanical Garden

VII. Description of the Zoological Garden

VIII. Description of the Observatory

IX. Description of the Theatre

X. Description of the Chapel

XI. Description of the Hall

XII. Description of the Rooms

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Г. Айкуни . . . Титан
2. Ուօտ Ոյտմէն . . . Բանաստեղծութիւններ
3. Գ. Հայկունի . . . Գիշերային թիթեռնիկ
4. Խորհ. Հայաստանի Յեղափոխ. տարեդարձին
5. Գ. Հայկունի . . . Բանաստեղծութիւններ Ա. Գ.
6. Ե. Տէր-Մարտիրոսեան . Բաղնի Օրերին
7. Վ. Վանդէկ . . . Մի Գրական Գոհար
8. Մ. Գորկի . . . Մայրը
9. Գ. Պլեխանով Գեղարեւոտը եւ հասար. կեանքը
10. «Բուրա» № 1.
11. Գ. Շամունց . . . Շամիին 2
12. Զէկ Լօնդօն . Երկաթէ Կրունկը (պատկերա-
գարդ)
13. Կնուտ Համսուն . Երկրի հիւթերը (պատկ.)
14. Վիկտոր Հիգօ . . . 93 թիվը (պատկ.)
15. Բացիկներ Շամումեան, Պլեխանով, Գերա-
սիմով եւ այլն

ՏՊԱԳՐԻՈՒՄ ԵՆ

16. Սինկլեր . . . Զունգլի (պատկ.)
17. Ա. Բօգրանով . Իմաստներ Մեննի. (պատկ)

ԴՐՄԵԼ.—Москва, Мясницкая, Армянский 2.
Арм. издательство „СЕРП и МОЛОТ“

50077

«Ազգային գրադարան»



NL0317224

6493

a

2-1217a